




մ Շ ա կ ո թ ա յ ի ն հ ա ն դ ե ս

Հայ արվեստ

ARMENIAN ART • CULTURAL MAGAZINE

ISSN 1829-0272

2/2006



Հրատարակիչ
Հայաստանի ազգային պատկերասրահ

Հիմնադիր
«ՄՈՄԻԿ» հայ մշակույթի կենտրոն

Լրատվական գործունեություն իրականացնող
«ՅՈԹ ԱՐՎԵՍՏ» ՍՊԸ
Հասցեն՝ Երևան, Խանջյան 43, բն. 14
Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 053641, տրված՝ 20.03. 2002 թ.

Թողարկման պատասխանատու,
գլխավոր խմբագիր՝ Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գործադիր տնօրեն Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ

Խմբագրական խորհուրդ
Փարավոն Միրզոյան (նախագահ)
Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Արարատ ԱՂԱՍՅԱՆ, Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ,
Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Սերգեյ ԽԱՉԻԿՕՂԼՅԱՆ, Դանիել ԵՐԱԺԻՇՏ,
Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ, Արծվի ԲԱՆՉԻՆՅԱՆ

Աշխատակազմ
Պատասխանատու քարտուղար
Նորայր ՎԱՐԴԱՆՅԱՆ
Համակարգչային ձեռավորող
Վարդան ԴԱԼԼԱՔՅԱՆ
Վերստուգող խմբագիր՝ Անժել ԱՄԻՐԻՆՅԱՆ
Հրատարակվում է գիտական
համագործակցությամբ
• Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
• ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
• ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ
ազգագրության ինստիտուտի

Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՅ-ի
«Ատենախոսությունների արդյունքների
տպագրության համար ընդունելի
ամսագրերի ցուցակում»

Գրանցման վկայական՝ 01Մ000095
Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության 21.06.2006
Ծավալը՝ 5 մամուլ
Տպաքանակը՝ 500
Տպագրությունը՝ «ԷԴԻՏՊՐԻՆՏ» ՍՊԸ

Խմբագրության հասցեն
Երևան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 10) 52 3501
խմբագիր՝ (374 91) 45 5347
տնօրեն՝ (374 91) 40 3215
Ֆաքս՝ (374 10) 56 3661
E-mail: hayart02@hotmail.com

Արտատպություն կատարելիս հղումը
«Հայ արվեստին» պարտադիր է:

«Հայ արվեստ» կարող էք բաժանորդագրվել
Հայաստանում՝ «Հայմամուլ» գործակալության,
արտասահմանում՝ հանդեսի լիազոր
ներկայացուցիչների միջոցով:

Մանրամասներին կարելի է ծանոթանալ հանդեսի
ինտերնետային կայքում:

www.armenianart.am

ԴԱՄԱՐՏԱԿԱՆԱԿՈՒՄ

- 3.....Մշակույթը Հայաստանի դեսպանն է աշխարհում
4.....**2. Դիլանյան,** «Թանգարանների գիշեր» պատկերասրահում
6.....Լիլիթ Տեր-Հակոբյան, Ալեքսանդր Թամանյան
10...Մարգարիտա Ռուսկյան, Անահիտ Ցիցիկյան - 80
12....«Հայաստանի պարի պետական ամսամբլում...», **Ռուզաննա**
Մովսիսյանի հարցազրույցը Գագիկ Կարապետյանի հետ
13....Լեւոն Լաճիկյան, Նահանջ երգով
15....Արծվի Բախչինյան, Ջուլյա երգեցողություն
16...Երիտասարդ կոմպոզիտորների մրցույթ Երևանում
17....Մարիամ Տեր-Գրիգորյան, Ռաֆայել Աթոյան, Դիմանկար
ինտերիերում
20, 26...«Մատենադարանի նոր ձեռագրերը» ցուցահանդեսը
(ներկայացնում է Արշակ Բանուշյանը)
22...Պողոս Հայթայան, Ալեք Կարապետյանի մասին
24...Գայանե Եղիազարյան, Երևանի մասնավոր
պատկերասրահները
27...Լիանա Մինասյան, Արվեստի միջազգային ակադեմիան
28...«ՄՈՄԻԿ» հայ մշակույթի կենտրոնի 15-ամյակը
32...Աելիտա Դուլխանյան, Վերագտնված Կոմիտասը
33....Վարդան Մատթեոսեան, Արժանքինահայ դերասան
Սարթին Աճեմեան
34...Վիկտորյա Տեր-Սարգսյան, Հայ տարազի ուսումնասիրության
նվիրյալը՝ Ֆլորա Գրիգորյան
36...Լ. Մինասյան, ճարտարապետ-նկարիչ Արծրուն Սեդրակյան
37...Վիգեն Ղազարյան, Էդվարդ Վարդանյանի գեղարվեստական
աշխարհը
30, 31, 35...Մշակութային լուրեր



Շապիկի առաջին էջին՝
Վահրամ Գայֆեճյան,
«Եղրեւանի»,
Հայաստանի ազգային
պատկերասրահ

Մեակույթը Հայաստանի դեսպանն է աշխարհում

ԽԱՇԽԱՆԳՐԱԿԱՆ

Շա՛ս է ասվել, որ Հայաստանն աշխարհին ներկայանում է առաջին հերթին իր հին ու նոր մեակույթով: Դա իհարկե լավ է եւ լավատես: Սակայն մեր մեակույթը լավատես կերպով ներկայացնելու գործում դեռեւս խնդիրներ ունենք թե՛ ներքին եւ թե՛ դրսւմ: Անդրադառնանք առկա բազմաթիվ հարցերից միայն մեկին:

Առաջին անգամը չէ, որ սփյուռքահայ մեր հայրենակիցներից sրսունջ ենք լսում, որ իրենց երկրներում ժողովուրդը հայկական մեակույթային ձեռնարկների նկատմամբ ՀՀ դեսպանատներն անտարբեր են: Վերջին սլաքը ստացանք Աբու Դաբիից, «Հայկական մեակույթային ընկերակցության» հիմնադիրներից Անդրանիկ Դադլյանից: Ընկերակցության հրավերով Հայաստանից մեկնած «Կադան» խմբի համերգները, որ կայացան մայիսի 14-ին Աբու Դաբիում, 15-ին Դուբայում, 16-ին Դաբա-յում եւ ամենուրեք հրաշալի ընդունելություն զգնելով շուրջ 6-7 հարյուր ունկնդիր ունեցան (մեծ մասամբ օտարներ, նաեւ այլ երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներ), այդպէս էլ ոչ մի այցելու չունեցան Հայաստանի դեսպանատնից, չնայած որ «Հայկական մեակույթային ընկերակցության» վարչական անդամներն անձամբ էին հրավիրահանումսեր հանձնել:

Իսկ մարտին մեր դեսպանատնի լուսաստիճանատների լուսավաճիկը արդարացիորեն դժգոհելու լուսաճառ ունեցավ նախնական հայկական հուշարձանների հայցնի մասնագետ, լուսաստիճան Արգամ Ալվազյանը, որը Մոսկվայում Հայաստանի դեսպանատնը բացել էր «Նախնականի լուսամասնաբանական հուշարձանները» լուսանկարների ցուցահանդես եւ ցուցադրել Հին Ջուղայի գերեզմանատնի խաչարների վերաբերյալ «Խզված մեղեդի. Ջուղա» փաստավավերագրական ֆիլմը: Ներկա էին հայեր, ռուսներ, մեակույթայիններ, վերլուծաբաններ, կազմակերպիչներ նաեւ կլոր սեղան: Չարմանալի է, որ Հայաստանի դեսպանատնի լուսաստիճանատներն այդպէս էլ միողորմումներին չմասնակցեցին...

Մյուս ժողովում նույն լուսակներն է, չնչին տարբերություններով:

Մենք Հայաստան-սփյուռք համաժողովներ ենք անում, միջազգային փառատոներ կազմակերպում, ուրախանում ենք, որ Եվրասիային մասնակցեցինք, փորձում ենք հաջողություն ունենալ համաշխարհային մեակույթային ու ստորային ձեռնարկներում, եւ այս ամենը նաեւ այն բանի համար, որ աշխարհը մեզ ճանաչի ու մեր խնդիրներին ընթերցումով վերաբերվի: Սա մասնավոր մարտավարական հարց չէ, այլ կարեւոր ռազմավարական խնդիր: Իսկ թե ինչպէս այն կիրականացնենք, կախված է ոչ միայն հայաստանցի ու սփյուռքահայ անհատ նախնայներից ու կազմակերպություններից, այլեւ լուսական կառույցներից, մասնավորապէս Հայաստանի դեսպանատներից, որոնք արտասահմա-



նում հայկական միջոցառումներին մասնակցելով ուղղակիորեն կփաստեն, որ հայությունը ոչ թե մի աշխարհափայտ հանրություն է, այլ իր թիկունքում լուսություն ունեցող գործը ուժ: Ուրեմն ինչո՞ւ կորցնել նման հնարավորությունը...

Հայ մեակույթը մեր կամավոր դեսպանն է աշխարհում, սակայն նրա «հավասարազորը» շա՛ս ավելի գործավոր կլինի, եթե ունենա Հայաստանի դեսպանատների հեղինակավոր «վավերացումը»:

armenian art • 2(16)/2006 3

«Թանգարանների գիշեր»



«Բնությունից դեպի մատյուրմորտ» խորագրով միջոցառումը վերածվեց դեռ կայացման ճանապարհին գտնվող երիտասարդ արվեստագետների ինքնահաստատման յուրօրինակ փորձի, երբ հայ հանրաճանաչ նկարիչների 12 մատյուրմորտների առջև Գեղարվեստի ակադեմիայի վեց ուսանողներ վերարտադրում

Մայիսի 20-ին Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ Ֆրանսիայի թանգարանների միության նախաձեռնությամբ անցկացվող «Թանգարանների գիշեր» ամենամյա միջազգային ակցիան: Մեզ մոտ այն անցկացվում է արդեն երկրորդ անգամ:

Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանի անմիջական ղեկավարությամբ միջոցառման կազմակերպիչների՝ փոխտնօրեն Հասմիկ Հարությունյանի, Անահիտ Մինասյանի եւ մի խումբ երիտասարդ գիտաշխատողների ջանքերով կայացած միջոցառումը կարելի է հաջողված համարել:

«Թանգարանների գիշեր»-ը սկսվեց որմնանկարների սրահում՝ ժամը 19:30-ին եւ ավարտվեց 24:30-ին:



էին նկարի բովանդակությունը: Նույն բանը, այս դեպքում արդեն այլ արտահայտչամիջոցներով՝ ծաղիկների «լեզվով», իրականացնում էին «Դոնալդս» ֆիրմայի հինգ ֆլորիստներ (ղեկավար՝ Դոնարա Կոստանդյան), կազմելով համապատասխան ծաղկեփնջեր: Միջոցառման ավարտին ծաղկի կոմպոզիցիաները եւ ստեղծված մատյուրմորտները հանվեցին վաճառքի, իսկ հասույթը տրամադրվեց Նուբարաշենի մտավոր թերզարգացած երեխաների թիվ 11 հատուկ դպրոցին:

Որմնանկարների նախասրահում ցուցադրվում էր Տարոն Սիմոնյանի «ճապոնական ծաղիկներ» լուսանկարների ցուցահանդեսը: Երկու ամիս անցկացնելով ճապոնիայում՝ նկարիչը տպավորվել էր բուսական աշխարհի հանդեպ ճապոնացիների հոգատար



վերաբերմունքից: Տարաշխարհիկ ծաղիկները լուսանկարվել էին ամենատարբեր դիտակետերից եւ այնքան հաջող, որ թվում էր, թե սրահում չքնաղ ծաղիկների՝ ջրաշուշանի, մանուշակների, խոլորձի, կակտուսների բուրմունքն էր տարածվել:

Պատկերասրահի 4-6-րդ հարկերում այցելուները հնարավորություն ունեին տեսնելու «Նկարի մեջ եւ նկարից դուրս» զգեստավորված մանրապատումները, որտեղ դիզայներ Իրինա Մազմանյանի ստեղծած յուրահատուկ հագուստների օգնությամբ երիտասարդ աղջիկները վերատադրում էին նկարի բովանդակությունը:

Երեւանի պետական կոնսերվատորիան ներկայացնող տասնվեց ուսանողների երգ-երաժշտության օգնությամբ սրահներում ծննելը առավել հաճելի էր դարձել: Միեւնույն ժամանակ 9-րդ հարկի կինոդահլիճում ցուցադրվում էին ժան Լյուկ Գոդարի ֆիլմերը, իսկ նույն հարկի սրճարանում հնչում էր ջազային երաժշտություն:

Կազմակերպիչները ինքնատիպ ավարտ էին մտածել «Թանգարանների գիշեր» միջոցառման համար: Այդ օրը հանրակրթական կենտրոնի սիրած Համբարձման տոնի հետ, որի ժամանակ նաեւ վիճակահանություն- բախտագուշակություն էր արվում: Տոնի թատերականացված հանդեսը լեփ-լեցուն դահլիճում ներկայացրեց ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանի ուսանողների «Բյուրակն» համույթը (ղեկավար՝ Հարություն Փանոսյան): Հայ ավանդական երգ ու պարով ուղեկցվող Համբարձման վիճակահանությանը մասնակից դարձան բոլոր ներկաները,


ՊԱՏԿԵՐԱՍՐԱԿՈՒՄ



շուրջպարին միացան հարյուրավոր հանդիսականներ: «Թանգարանների գիշեր» միջոցառումը վերածվեց իսկական տոնահանդեսի:

Զարուհի Դիւանյան
պատկերասրահի գիտաշխատող

**Հայրենիում
«գրվեց»
նրա կյանքի
ռեֆլեկտը,
իսկ նրա
գործով՝
հայրենիքի
աղազան**



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ

...եւ չի կարող պատահել,
որ նրանք, ովքեր հանճարեղ են եղել կյանքում,
մահվանից հետո չդառնան անմահ:
Յյուզո

1878 թվականի մարտի 4-ին Հովհաննես Ծերունի Թամանյանը եւ Մարիա Էմանուելի Թամանյան (օրհորդական ազգանունը Պոպովա՝ Նախիջեւանի Տերտեռյանների տոմից սերված) ունենալով իրենց չորրորդ զավակին՝ նրան կոչեցին Ալեքսանդր: Կյանքի բոլոր ժամանակներում այս բացառիկ անհատականությունը, որին տանը փաղաքշորեն անվանում էին Շուրոչկա, իսկ հետագայում (ակադեմիայում) նաեւ Տամո, աչքի էր ընկնում հնարամտության, նուրբ հումորի, նրբանկատության եւ ավելի ուշ՝ բարեկիրք վարվեցողության շնորհիվ: Նա ամենուրեք միջավայրի սիրելին էր՝ ընտանիքում, Կուբանի Ալեքսանդրյան ռեալական ուսումնարանում (1888-1896 թթ.), Պետերբուրգի Գեղարվեստի կայսերական ակադեմիայում (1898-1904 թթ.) եւ այլուր: Ի դեպ, առաջին տարին նա չընդունվեց Ակադեմիա. նկարչության քննության ժամանակ նկատելով, որ ընկերը դժվարանում է նկարել, իսկ վերջինս երրորդ տարին էր փորձում քննություն հանձնել, նրա փոխարեն գրեթե ամբողջությամբ կատարեց առաջադրանքը եւ պարգապես չիսացրեց ավարտել իրենը:

Դեռ ուսանողական տարիներից Թամանյանն աշխատում էր Պետերբուրգի «Հայկական եկեղեցիների գույքի կառավարման կոմիտեում»՝ իբրեւ ճարտարապետ: Ակնհայտ էր նրա մեծ սերն ու նվիրվածությունն իր մասնագիտության հանդեպ: Նա մանրամասն չափազերելով Նեւսկի պողոտայի հայկական եկեղեցին, իրականացրեց հիմնավոր վերանորոգման նախագիծ: Արդյունքում այն ազատվեց մի շարք անհարկի կցակառույցներից, իսկ առանձին հատվածներ փրկվեցին անվերադարձ կորստից:

Տարիներ անց իր բազմաթիվ մեծարժեք ստեղծագործություններից մեկը Թամանյանն իրականացրեց Իշխան Շչերբատովի պատվերով (1911 -1913 թթ.): Վերջինս արվեստագետ էր, Մոսկվայի բարձրաշխարհիկ հասարակության լայն շրջաններում հայտնի որպես գեղարվեստի մեծ սիրահար, յուրահատուկ ճաշակի տեր մի անձնավորություն: Նրա ցանկությամբ Մոսկվայի Նովինսկի բուլվարի (ներկայումս՝ Զայկովսկու փողոց) եկամտաբեր տունը պետք է համադրվեր իր առանձնատան հետ: Իսկ կառույցին հատկացված հողատարածքը չափազանց փոքր էր ու անհարմար: Սա բավական

չէր, դեռ իշխան Շչերբատովն էլ հաճախակի փորձում էր սեփական դիտողություններով միջամտել կառուցման ընթացքին: Սակայն Թամանյանն անզիջում էր եւ վեճերի արդյունքում արգելեց տանտիրոջն այլեւս մոտենալ շինհրապարակին: Կարելի է միայն ենթադրել, թե ինչպիսին էր ճարտարապետի հեղինակությունը, որ ինչպես պնդում էին ականատեսները, դրանից հետո իշխանը միայն հեռվից էր դիտում իր տան կառուցումը:

Հետագայում «Архитектурно-Художественный Еженедельник» շաբաթաթերթի հերթական հաղորդագրությունից մեկում (1914 թ. N1, էջ 7.), կկարդանք. «Մայիսի 22-ին «գեղեցիկ ճակատների» մրցանակաբաշխության հանձնաժողովը... ավարտեց 1913 թ.-ին Մոսկվայում կառուցված եւ մրցույթին ներկայացված բոլոր տների ճակատների քննարկումը:

Առաջին մրցանակ- ոսկե մեդալ շնորհվեց Իշխան Շչերբատովի՝ Նովինսկի բուլվարի տան ճակատների համար, ճարտարապետ - նկարիչ Ա. Ի. Թամանովին ...»:

Նրա բոլոր ստեղծագործություններն էին արժանանում առանձնահատուկ կարծիքների եւ հասարակության մեջ, եւ մամուլում: 1913 թվականին Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդը Ռոմանովների դինաստիայի 300-ամյակի հոբելյանական տոնակատարությունների կապակցությամբ շրջագայում էր Վոլգայով: Մի քանի քաղաքներում կայսեր ժամանումը նախատեսված էր տոնել նահանգային ցուցահանդեսների բացման արարողություններով: Իրականացված ցուցահանդեսային կառույցներում ժողովրդական ճարտարապետության ծավալների վերարտադրման մաքրությամբ, գունեղությամբ եւ ծավալատարածական լուծումների կատարելությամբ մյուսներից առավել աչք էր շոյում Յարոսլավլի հոբելյանական ցուցահանդեսը, որի ճարտարապետն էր Ալ. Թամանյանը: Այն գրավեց նաեւ Նիկոլայ Ռոմանովի ուշադրությունը, եւ նա լակոնիկ կերպով նկատեց. «Այն ինձ դուր է գալիս, չափազանց հաջող է»: Ցավոք, հետագայում բոլշևիկները Ռոմանովների անվան հետ կապված ամեն ինչ ոչնչացնելու մոլուցքով տարված, այրեցին այս եզակի համալիրը:

Թամանյանը նաեւ նորարարությունների սիրահար էր. նա յուրովի էր ընկալում եւ իր նախագծերում մեկնաբանում 20-րդ դարի ճարտարապետության, քաղաքաշինության տեսության առաջադեմ գաղափարները: Ուշագրավ է նրա խոշորամասշտաբ ստեղծագործություններից մեկը՝ 1913-1914 թթ. Ն. Կ. Ֆոն - Մեկկի պատվե-

րով իրականացրած Պրոգորովկա հոբելյանական ավանդ (ներկայումս՝ Կրատովո կայա-
րանի մոտ)։ Գրականության մեջ Պրոգորովկան հիշատակվում է որպես Ռուսաստանի
առաջին քաղաք պարտեզը։ Իրավմամբ, Թամանյանը առաջիններից էր, որին գրավեց
մարդու առողջ եւ լիարժեք կյանքի համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ նորմերով
թելադրված քաղաք - պարտեզի տեսությունը։ Նրան ոգեւորում էր գաղափարը, իսկ հա-
տակագծային լուծումներում ճարտարապետի միտքն առավել ճկուն էր եւ ստեղծագոր-
ծական մտահղացումներով լեցուն։

Տասնհինգ տարիների ստեղծագործական կյանքի ընթացքում (1904 - 1919 թթ.)
Թամանյանը կառուցել է Պետերբուրգում, Մոսկվայում, Ցարսկոյե Սելոյում, Օդեսայում,
Յարոսլավլի եւ Օրյոլի նահանգներում՝ ինչպես երկրի ամենահարուստ եւ հայտնի ազն-
վականների, այպես էլ կայսերական ընտանիքի համար։ Նախագծային աշխատանքնե-
րը նա մշտապես համատեղում էր հասարակական ու քաղաքացիական գործերի հետ,
իսկ ընթերցելու մեծ սերը հնարավորություն էր ընձեռում լինել իրազեկ եվրոպայի ու աշ-
խարհի արվեստների նորույթներին։

Ռուսաստանում նա նվաճել էր իր մասնագիտության համար բոլոր հնարավոր գա-
զաթները, համընդհանուր սեր եւ ճանաչում, բարձր հեղինակություն հասարակության
սերուցքը համարվող արվեստագետների ու մտավորականների միջավայրում, բազում
ստեղծագործական «դափնիներ», ակադեմիկոսի կոչում, պետական ամենաբարձր ու
պատվավոր պաշտոններ (ե՛ւ ցարական, ե՛ւ հետհեղափոխական ժամանակներում)¹ եւ
վերջապես բարեկեցիկ կյանք ու բազմաթիվ առաջարկներ՝ ապրել եւ ստեղծագործել
Լոնդոնում կամ Փարիզում (որտեղ ինքը ցանկանար)...

Մեծ ճարտարապետը կայացրեց միանգամայն այլ որոշում։ «Եթե արվեստը նույ-
նիսկ հայրենիք չունի, արվեստագետներն ունեն այն», պնդում էր Սեն Սանսը, իսկ «հայ-
րենիքը մի եզերք է, ուր գերի է հոգին», ավելի վաղ հասկացել էր Վոլտերը։ Սեփական
նախաձեռնությամբ, առանց որեւէ հրավերի, քաղաքացիական պատերազմների դժվա-
րին պայմաններում Թամանյանը կարողացավ հասնել Չայաստան։ Կոտորածներից ու
պատերազմներից ավերակների վերածված, բառացիորեն արյունաքամ Չայաստանում
համատարած սով էր, ավելին, տիֆի համաճարակը հնձում էր հազարներով։ Այս իրա-
կանությունն անգամ չսասանեց նրա որոշումը։ Նա եկել էր որպես կայացած մասնա-



Ալ. Թամանյանը կնոջ հետ

նոր ճարտարապետության համար. սկս-
վեց ձեւաստեղծ ու չափազանց բեղմնա-
վոր մի շրջան։ Նա չէր կարող զբաղվել
միայն ստեղծագործական գործունեու-
թյամբ, քանզի հստակ տեսնում էր՝ որ խն-
դիրն առավել ընդգրկում է՝ բավական չէր
կերտել մայրաքաղաք, անհրաժեշտ էր
«կառուցել Չայաստանը», եւ պարտավոր-
վեց ստանձնել բազմաթիվ պետական
պաշտոններ³։ «Թամանյանն աշխատում
էր վաղ առավոտից երբեմն մինչեւ ուշ գի-
շեր, առանց հոգնելու, առանց լարվածու-
թյան»։ հիշում է Մարկ Գրիգորյանը։ Ամե-
նից անհետաձգելի մայրաքաղաքի վե-
րականոնումն էր, եւ նա սկսեց Երեւանի
գլխավոր հատակագիծն ավարտելու գոր-
ծը, որը հաստատվեց ժողկոմխորհի 1924
թ. ապրիլի 3-ի արտակարգ նիստում։

Հատակագծում քաղաքն ուներ հս-
տակ ֆունկցիոնալ գոտեվորում։ Նկատի
ունենալով Երեւանի կլիմայական պայմա-
նները՝ բոլոր կենտրոնները, թաղամասերը
նախագծված էին կանաչապատ եւ ջրային
տարածությունների համադրությամբ։ Հա-
տակագիծը նախատեսված էր 150 հազար
բնակչի համար (1924 թ. Երեւանը ուներ
մոտ 60 հազար բնակիչ) եւ քաղաքի այս-
պիսի մեծացումը ժամանակակիցներից
շատերին թվում էր անհավանական, նույ-
նիսկ քննադատելի։

Հատակագծում շեշտված են կուլտու-
րայի եւ արվեստի ինչպես նաեւ վարչական
կենտրոնի առանցքային դիրքերը (գաղա-
փարապես՝ նաեւ դերը)։ Դրանց կարեւորա-
գույն կառույցները՝ ժող. տունը (Օպերա-
յի եւ բալետի պետական թատրոն) եւ Կա-
ռավարական տունը ստեղծում են քաղա-
քի գլխավոր առանցքը՝ Յուսիսային պողո-



Իշխան Շչերբակովի տունը Մոսկվայում


գետ, իր փորձառությունն ու ստեղծագործական հնարավորություններն ի սպաս դնելու
հայրենիքի եւ նրա մայրաքաղաքի կառուցման գործին։ Եկել էր, որպեսզի իր ժողովրդին
նվիրի նրան պատշաճող եւ 20-րդ դարի չափանիշներին համահունչ մայրաքաղաք։

Առավել, քան որեւէ մեկը, նա պարզ գիտակցում էր, որ առանց «Երեւանի վերակա-
ռուցման գլխավոր հատակագծի» հնարավոր չէ ապագա նոր քաղաքի կայացումը եւ
առաջին իսկ քայլերն ուղղված էին ՀՀ կառավարությանը գլխավոր հատակագծի անհ-
րաժեշտության խնդիրը ներկայացնելուն։ Ինժեներ Բ. Մեիրաբովի «Հին Երիվանի» (1908
- 1911 թթ.) գլխավոր հատակագծի վրա նա ձեռնամուխ եղավ ստեղծելու «արեւային մի
քաղաք» (Ե. Չարենց), որին դեռեւս բախտ չէր վիճակված ավարտվել։ 1920-21 թ. հեղա-
փոխական իրադարձություններից հետո դաշնակցական կառավարությունը հեռանում է
Զանգեզուր, այնտեղից Պարսկաստան։ Նրանց հետ էր մտավորականության մեծ մասը,
նաեւ Ալ. Թամանյանը²։

Թամանյանի ստեղծագործության թավրիղյան շրջանը առանձնապես լուսաբան-
ված չէ։ Հայտնի է, որ նա աշխատել է իր մասնագիտությամբ։ Բացի այդ, նա իր հետ տա-
րել էր Երեւանի վերակառուցման գլխավոր հատակագծի գծագրերը եւ ժամանակ առ
ժամանակ աշխատում էր դրանց վրա։

Թավրիղում բնակվելու տարիներին մահացավ Թամանյանի երկու դուստրերից
ավագը՝ 13-ամյա Մարիամը (Մարուսյան)...

ճարտարապետի վերադարձը Չայաստան (1923 թ.) բեկումնային էր հայկական



Երեւանի վերակառուցման գլխավոր հատակագիծը, 1932թ.

տան, դառնալով Թամանյանի ստեղծագործական կյանքի ամենակատարյալ գլուխգործոցները, դրանք մինչեւ այժմ անվերապահորեն մնում են Երեւանի «Բագին» (Ե. Չարենց) - դոմինանտները:

Այդ մասին նա երագում էր շատ վաղուց: Նրա ծեռագրով գրված մի երկտող սկսվում է այսպես. «Կցանկանայի կառուցել օպերային թատրոն: Դասական ոճի... (31. դեկտեմբերի 1911 թ., 1.20 ռ. գիշեր)»: Սա արդեն մեծ նպատակ էր, որ իրականություն դարձավ տարիներ անց՝ գերմարդկային ճիգերի ու տառապանքների շնորհիվ: Սակայն օպերային արվեստը Թամանյանի մեծ սերն էր, եւ այն օրրանը, ուր պիտի հանգրվաներ այդ սերը, չէր կարող չկերտվել մտքի հզոր ու հանճարեղ թռիչքով:

Թատրոնի երկդաիլիճ շինությունը լուծված է օվալաձեւ ծավալով, որի կենտրոնում բարձրանում է բեմը: Հեղինակը երագում էր բեմն իրականացնել ինժեներական մտքի ամենահամարձակ, գրեթե անհնարին թվացող մտահղացմամբ: Մարկ Գրիգորյանի վկայությամբ բեմահարթակը պետք է կազմվեր 63 առանձին հար-

թակներից: Յուրաքանչյուր հարթակը (մոտավորապես 2x2 մետր) անհրաժեշտության դեպքում կբարձրանար եւ կիջներ էլեկտրական վերելակների սկզբունքով (չի իրականացվել): Բեմի այս անմախաղեպ կառուցվածքն անշուշտ կհարստացներ բեմադրության տեսարանների պատկերայնությունը: Տարիներ անց միայն, ինժեներական այս միտքը կիրառվեց եվրոպական առաջնակարգ թատրոններում:

Նախագծի նախնական տարբերակներում կար նաեւ բացօթյա՝ ամառային թատրոնի գաղափարը, ըստ որի այն տարածականորեն եւ սյունազարդ ճեմուղիներով կապվելու էր շենքը շրջապատող պուրակի հետ, որ պիտի լիներ թատրոնի նախասրահը բաց երկնքի տակ:

Գրիգոր Հիրմազանի հավաստմամբ տարիներ շարունակ, չափազանց մտերիմ երկու մեծ արվեստագետներ՝ Ալեքսանդր Սպենդիարյանը եւ Ալեքսանդր Թամանյանը միասին երագում էին կառուցվող ժող. տան բացման օրը հավերժացնել «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ: Սակայն պատահական չէր Թամանյանի նախագագացումը, երբ մի առիթով մշեց, որ դեռեւս ոչ մի ճարտարապետ ավարտում չի տեսել իր կառուցած օպերային շենքը: Ավաղ, նրանք երկուսն էլ չարժանացան այդ օրվան: Իսկ վարպետի մահից մեկ տարի անց՝ 1937 թ.-ին, Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում Երեւանի Օպերայի թատրոնի նախագծին շնորհվեց Ոսկե մեծ մեդալ - Grand Prix:


Ազդեցիկ է նաեւ մյուս մեծագործությունը՝ Կառավարական տունը: Կոմպոզիցիայով բարդ, ձեւերով բազմազն նրա ճարտարապետությունը դիտվում է ամբողջական, յուրաքանչյուր ճակատ ունի մյուսների հետ շարունակելի տրամաբանական մշակում: Պլաստիկան հետմաճակատներում՝ պարզ եւ զուսպ, հրապարակ մտնող փողոցներում՝ հարուստ եւ հյուսթեղ, իսկ հրապարակի օվալը կազմակերպող զոգավոր ճակատում՝ ավելի մոնումենտալ, խորը եւ արտահայտիչ է: Նույն այս տրամաբանությամբ է զարգանում ճակատների հարդարանքի միջոցների հարստացումը, որին զուգահեռ աշխուժանում է լուսաստվերը՝ ճարտարապետական այդ հզոր արտահայտչամիջոցը:

Շենքի ներքին բակում նախատեսված էր մյուս մասերին կից, սակայն նրանցից բարձր մի գլանաձեւ ծավալ՝ կենտրոնական վեստիբյուլը (չի իրականացվել): Այն ավարտվելու էր շենքի տարածական հորինվածքում դոմինանտի դերը ստանձնող եւ գլխավոր ճակատներում երեւացող մեծածավալ գմբեթով: Կարելոր էր նաեւ նրա քաղաքաշինական դերը (որպես Հյուսիսային պողոտայի առանցքային կետ):

Թերեւս չափազանցություն չէ ակադեմիկոս Ա. Շչուսեւի այն կարծիքը, թե «...Սերունդներ կգան աշխարհի բոլոր ծայրերից այս շենքը, նրա յուրաքանչյուր գիծ, մանրամասն ուսումնասիրելու համար: Ինչպես աշխարհահռչակ մի քանի կողողներ, այնպես եւ այս շենքը շինարվեստի հոյակապ հուշարձան է եւ անմահ...»:

Խորհրդային Հայաստանում ապրած տասներեք տարիների

Կառավարական տան համայնապատկերը



ընթացքում (1923 - 1936 թթ.) առավել քան երբեք էլ Թամանյանն աշխատում էր անընդմեջ գերծանրաբեռնվածության եւ հաճախ պատահող քննադատական «հարձակումների» պայմաններում (կապված ժողովան ճարտարապետական ոճի, կամ Երեւանի վերակառուցման գլխավոր հատակագծի լուծումների հետ): Չափազանց ծանր էին նաեւ կենցաղային պայմանները: Հարմարություններից զուրկ նրա բնակարանն այնքան փոքր էր, որ ավագ որդին՝ Գեորգը տարիներ շարունակ (բոլոր եղանակներին) քնում էր տան բաց պատշգամբում: Իր մտերիմ ընկերոջը՝ Ե. Լանսերեյին գրած նամակներից մեկի տողատակում Թամանյանը նշում է. «Երեւանում ճոճաւ սառնամանիք է եւ սահմակի ճանապարհներ: Վառելափայտ չկա, սառչում ենք եւ հիվանդ ենք, ... (12. հունվ. 33թ.)»:

Կյանքի նման պայմաններն ու աշխատանքային լարվածությունը ժամանակի ընթացքում խաթարեց նրա առողջությունը, վերջին տարիներին նա գրեթե կուրացել էր: Սակայն Թամանյանի կյանքի կործանիչ ողբերգությունը պատահեց 1935 թ.-ին, երբ մահացավ 19-ամյա դուստրը: Վառվառան, որին տանը կոչում էին Առջկա, Թամանյանի սիրելին էր, եւ նրա անուշիկ ընկերակցության ու նուրբ հունորի շնորհիվ էր, որ ճարտարապետն ուշ երեկոներին, իր կարճատեւ հանգստի ընթացքում, կարողանում էր սթափվել եւ հանգստանալ գերհոգնածությունից:

Ամիսներ անց նա հիվանդացավ թոքաբորբով: Կամիլա Մատվեյենա Էդվարսը՝ Թամանյանի կյանքի ամենաջերմ ուղեկիցը (1908 թ.-ից, երբ ամուսնացան), հետագայում իր ամուսնու վերջին օրերի մասին պիտի հիշեր. «Իր հիվանդանալուց մի քանի օր առաջ նա կրկնում էր. «Մի՞թե արդեն 17 ամիս է, ես ապրում եմ առանց Առջկայիս»:

Հիվանդանալով, անկողնում պառկեց միայն երկու օր, նրա մաշված սիրտը չդիմացավ եւ 1936 թվականի փետրվարի 20-ին, երեկոյան ժամը մոտավորապես 8-ին, Ալեքսանդր Իվանովիչը ընդմիշտ փակեց աչքերը»:


«...Որքան նման է եղել պահին այդ՝ մարող կանթեղի» (Ե. Չարենց):

Թերեւս ճշմարտություն է Բոնապարտի այն միտքը, որ հանճարեղ մարդիկ այրվելու կոչված ասուպներ են, որպեսզի լուսավորեն իրենց դարը...

Թամանյանի մահվանից 65 տարի անց միայն 2001 թ.-ին, Կառավարական 3 շենքում (մուտքը՝ Հանրապետության փողոցից) տեղի ունեցավ «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտի» հանդիսավոր բացումը: Այս դասական արվեստի օրրանում պահպանվում եւ ցուցադրվում են մեծ ճարտարապետի աշխատանքների մի մասը: Արխիվային եւ ցուցադրված բազմապիսի նյութերը (նախագծային աշխատանքներ, գրաֆիկա, ակվարել եւ այլն) դասակարգված են ժամանակագրական կարգով՝ ըստ նրա



Ժողովան մանրակերտի տերբերակ



Շինարարության ընթացքը...

ստեղծագործական ժամանակաշրջանների:

2003 թ.-ին մեծ հաջողություն ունեցավ թանգարանի արտագնա ցուցահանդեսը Ֆրանսիայի Մարսել քաղաքում:

Թանգարանը գործում է չորեքշաբթիից կիրակի օրերին, ունի ինտերնետային կայք. <http://www.tamanyan.org>

Լիլիթ Տեր-Հակոբյան

¹ Ցարական Ռուսաստանում նշանակվել է «Նորին գերազանցության կայսեր աշխատակազմին կից Գեղարվեստական վերահսկողության կոմիտեի» գեղարվեստական մասի աշխատակից, այնուհետեւ տնօրեն, հեղափոխությունից հետո՝ Գեղարվեստի ակադեմիայի խորհրդի նախագահ՝ վիցե-պրեզիդենտի իրավունքներով, Արվեստի գործերով խորհրդի նախագահ:

² 1919թ. - ից նշանակվել է ՀՀ Տեխնիկական միության նախագահ, 1920թ. - ին՝ նա - ՀՀ Գլխավոր ճարտարապետի վարչության նախագահ - պետական հիմնարկությունների շենքերի կառուցման շինարարական համծնամտողի նախագահ:

³ 1923 թ. իրավիրվել է ՀՍՄՀ Ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցությանը կից՝ տեխնիկա - ծրագրային գործերի խորհրդատուի պաշտոնին, նշանակվել է ՀՍՄՀ Ժողկոմխորհին կից Գերագույն տեխնիկական բաժնի վարիչ, Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ, 1925 թ.-ից՝ Կերպարվեստի աշխատողների ընկերության նախագահ - Պետականի շինարարա - արդյունաբերական սեկցիայի նախագահ: Ստեղծելով ճարտարապետական արվեստանոց, Հայաստան է հրավիրել ինժեներ - մասնագետների ու շինարարներին:

Բոցավառվող կյանք

Անահիտ Ցիցիկյան - 80



Անահիտ Ցիցիկյանը փառահեղ կերպար է հայ ժամանակակից մշակույթի երկնակամարում: Տաղանդավոր ջութակահարուհի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստուհի, հայ կատարողական արվեստի խորը ուսումնասիրող, մանկավարժ ու հրապարակախոս, բազմակողմանի հետաքրքրությունների տեր անձնավորություն:

Անահիտ Ցիցիկյանը 15 տարեկան էր, երբ նրա կյանքը կտրուկ փոխվեց: Նա չէր էլ պատկերացնում, որ արձակուրդներն անցկացնելով բարեկամների մոտ՝ Երեւանում, ընդմիջտ լքում է ծննդավայրը՝ Լենինգրադը եւ բաժանվում հորից, որին անչափ կապված էր: Միքայել Ցիցիկյանը գործի բերմամբ մնացել էր քաղաքում, երբ սկսվեց պատերազմը, եւ նա, հազարավոր համաքաղաքացիների պես, զոհվեց պաշարված Լենինգրադում: Միքայել Ցիցիկյանը՝ մասնագիտությամբ տնտեսագետ, նաեւ հայտնի լրագրող, բազմակողմանի հետաքրքրությունների տեր մարդ էր: Նրանից էլ դուստրը ժառանգել էր տաղանդն ու գիտելիքի ծարավը, բացառիկ աշխատասիրությունն ու գործունեության տարբեր բնագավառները համատեղելու յուրահատուկ ունակությունը:

Դեռ մանկուց նրան վիճակված էր դառնալու երաժիշտ: Երբ Անահիտ Ցիցիկյանն առաջին անգամ բեմ բարձրացավ, ընդա-

մենը 6 տարեկան էր: Կյանքի կտրուկ ու տխուր շրջադարձը, այնուամենայնիվ, չփոխեց նրա հետաքրքրությունների ոլորտը: Երեւանում նա գտավ սրտաբուխ ջերմություն ու օթեւան, ձեռք բերեց հիանալի ուսուցիչներ, ընկերներ, մտերմիկ միջավայր:

«Հայաստանը ես սիրեցի միանգամից, - հիշում էր նա, - Այդ սերը ներշնչված էր ինձ Հայրենիքիս հետ հանդիպումից շատ ավելի վաղ, քանզի հայրս միշտ հիացնումնքով էր պատմում հարազատ երկրի մասին: Այդ պատճառով, չնայած այն բանին, որ մենք այդքան անսպասելի հայտնվեցինք ծանր կացության մեջ՝ առանց օթեւանի, ծնեռային հազուստի, դրամի, ես բավականին շուտ հարմարվեցի պատերազմի թելադրած պայմաններին ու լիովին նվիրվեցի երաժշտությանը» (Անահիտ Ցիցիկյանի արխիվ):

Թե ինչպիսի ջութակահար նա դարձավ, հիշում են շատերը: Նրա կատարողական արվեստն անտարբեր չէր թողնում ոչ մեկին: Նա փայլուն տիրապետում էր գործիքին՝ համատեղելով կատարյալ վարպետությունն ու խոհունությունը: Նրա նվագն ունկնդիրներին միշտ էլ ինչ-որ լրացուցիչ ինֆորմացիա էր հաղորդում: Անահիտ Ցիցիկյանն անընդունելի էր համարում երաժշտության կատարումն առանց հեղինակի խոր իմացության: Եւ ոչ միայն հեղինակի: «Երաժշտության ետեւում դարաշրջան է», - ասում էր նա իր աշակերտներին: Իսկ դասավանդումը Երեւանի կոնսերվատորիայում դարձել էր նրա կյանքի կարեւոր բաղկացուցիչներից մեկը: Համատեղելով համերգային գործունեությունն ու մանկավարժությունը՝ նա լրջորեն զբաղվում էր հայկական կատարողական արվեստի ուսումնասիրությամբ՝ ուշադրությունը սեւեռելով հատկապես աղեղնային գործիքների պատմության հետազոտմանը:

Երաժշտական ստեղծագործության պրոպագանդայի անդաստանում Անահիտ Ցիցիկյանի գործունեությունն ընդգրկում էր ու համապարփակ: Բավական է դիտել նրա համերգների ծրագրերը՝ Բախից մինչեւ Կլոդ Դեբյուսի, Դմիտրի Շոստակովիչից մինչեւ Էդգար Յովհաննիսյան:

Անահիտ Ցիցիկյանի գործունեությունը մտածված էր ու նպատակաուղղված: Նա ոչ միայն ուզում էր ունկնդրին մատուցել անցյալի մեծ երաժշտությունը, այլեւ սեր ներշնչել ժամանակակից, հատկապես հայկական երաժշտության հանդեպ:

Նրա ինտելեկտուալ պաշարը հնարավորություն էր տալիս գիտելիքներ քաղելու ամենատարբեր աղբյուրներից: Անահիտ Ցիցիկյանը կատարելապես տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն ու գերմաներեն լեզուներին եւ արդեն հասուն տարիքում, ճանաչում ձեռք բերելով որպես հետազոտող, դասախոսություններ էր կարդում Հայաստանի երաժշտության պատմության վերաբերյալ արտերկրում:

Թե ինչպես էր նա այդ ամենը հասցնում՝ նրա կենսագրության հարցերի հարցն էր: Կյանքի ընթացքում Անահիտ Ցիցիկյանը հանդես է եկել 1000-ից ավելին համերգներով, գրել եւ պատրաստել ավելի քան 300 հոդված, ռադիո եւ հեռուստահաղորդումներ: 1977թ. լույս է տեսել նրա առաջին գիրքը՝ «Հայկական աղեղնային արվեստը»: Դա հսկայական աշխատանքի արդյունք էր: Գիրքն ընթերցողի առջեւ բացահայտում է հայրենական կա-

տարողական արվեստի հարուստ պատմությունը, վեր հանում երբեմնի հռչակավոր երաժիշտների, վիրտուոզների տասնյակ անուններ, ինչպիսիք էին Դավթյանը, Վրույրը, Տարեմտեյանը եւ այլք:

Գրքի հրատարակումից հետո նա սեւեռում է իր ուշադրությունը դեպի երաժշտական հնագիտություն եւ, փաստորեն, Հայաստանում հիմնում նոր հետազոտական ասպարեզ: «Այն, ինչ մենք ենթադրում ենք «երաժշտական հնագիտություն» ասելով՝ միայն մշակութային հուշարձան չէ:

Մենք այդ հասկացությունը դիտարկում ենք ընդգրկում երաժշտական պլանով: Չէ՞ որ հետազոտման գլխավոր առարկան ազգային գործիքների ամբողջությունն է, առհասարակ, երաժշտական մշակույթի ամենաբարդ երեւույթներից մեկը, թե՛ հոգեւոր, թե՛ պատմական առումներով»,- ասում էր նա:

80-ականների սկզբին Անահիտ Ցիցիկյանը, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հովանավորությամբ սկսում է «Երաժշտական մշակույթի վաղ ձևերի ծագման ու առանձնահատկությունների պրոբլեմները» խորագրով միջազգային կոնֆերանսի կազմակերպման աշխատանքները: Կոնֆերանսը կայացել է 1986թ. հոկտեմբերին, Դիլիջանում, կոմպոզիտորների ստեղծագործական տանը, ուր մի քանի օրով հավաքվել էին հայտնի գիտնականներ՝ Հայաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ուզբեկստանի պատմաբաններ, հնագետներ, լեզվաբաններ, երաժշտագետներ...

Այն հարցը, թե ո՞րտեղից հայկական ժամանակակից ջութակային արվեստում այդքան բնական փայլ, ինչ-որ առեղծվածային խորություն, որն, օրինակ, հաղորդում է Ավետ Գաբրիելյանի նվագը, դեռ վաղուց էր գրավում Անահիտին: Ջութակ, որ վարպետի ձեռքերում հնչում էր ինչպես հարազատ, ազգային գործիք... Ո՞րտեղից այդ անսովոր զգացողությունը: Իր իսկ փորձից Անահիտն արդեն գիտեր, որ, կարծես, մարդու բնական շարունակություն, «մարդկային ծառի» ինչ-որ ծյուղը հանդիսացող այդ գործիքի ամենածածուկ գաղտնիքները կարող են բացահայտվել միայն զենետիկ, ինստիտուտի մակարդակի վրա: Այդպես, լարային արվեստին վարպետորեն տիրապետումից նրա մեջ ծնվեց ջութակի պատմության, իսկ հետագայում եւ հայկական աղեղնային արվեստի նախապայմանների հանդեպ հետազոտողի հետաքրքրություն: «Հայկական ջութակը ավելի քան հազար տարեկան է»,- ապացուցում էր նա: Դրա վկայությունը մեզ է հասցրել պատմությունը՝ ջութակի նախատիպի վրա նվագող երաժիշտի տեսքով՝ պատկերված Դվինի 10-11-րդ դարերի մի գավաթի վրա. այդ պատկերը դարձավ բացառիկ հայտնագործություն, որն արմատապես փոխեց գիտնականների կարծիքը ջութակի ծագման վերաբերյալ: Անահիտ Ցիցիկյանն այս մասին գրում է. «Ինչպես հայտնի է, աղեղնային գործիքները լայն տարածում են գտել վերջին հազարամյակում եւ ձեռք է բերել գերիշխող նշանակություն հետվերածննդյան շրջանում: Եւ Հայաստանն ունի բոլոր հիմքերը հավակնելու առաջատար դերերին նրանց ծագման հարցում: Աղեղով վաղ պատկերների թվին են պատկանում Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքի՝ Դվինի պեղումներից հայտնաբերված երկու նկար: Դա 10-11-րդ դդ.

ջութակ է եւ 9-10-րդ դդ. քամանչա: Այսօր դրանք կարելի է դասել գիտությանը հայտնի վաղ աղեղնավորների շարքին:

Հատկանշական է, որ ջութակով երաժիշտի պատկերը ուշադրություն է գրավում թե՛ Արեւմուտքին, թե՛ արեւելքին բնորոշ հատկանիշների զարմանալի միահյուսմամբ: Երաժիշտը նստած է փռոցին Արեւելքին բնորոշ դիրքով, ոտքերը՝ ծալապատիկ, իսկ նվագում է արեւմտյան ժողովուրդներին բնորոշ ձեւով: Արդյոք դա չի հանդիսանում մեր ժողովրդի՝ զարգացման ողջ ընթացքով թելադրված պատմական առաքելության ապացույցը՝ փնտրել ու գտնել Արեւելքի ու Արեւմուտքի սինթեզը, ինչն ամբողջապես արտացոլվում է հայկական գեղարվեստական ստեղծագործության մեջ» (Հարցազրույց Անահիտ Ցիցիկյանի հետ. «Երաժշտական հնագիտություն», «Կոմունիստ», 1989, օգոստոսի 20):

Այդ բնագավառում հետագա հետազոտությունների արդյունք դարձավ հետաքրքիր մի հոդված՝ «Աղեղնավոր գործիքների պատմությունից Հայաստանում»: Անահիտ Ցիցիկյանին հաջողվում է հասկանալ ու պարզաբանել ժամանակի ընթաց-



Ա. Ցիցիկյան, Լ. Գինգբուրգ, Ե. Մեմուլիսին, Մոսկվա, 1962թ.

քում վնասված հին հարթաքանդակներին ու որմնանկարներին պատկերված գործիքների բնույթը: Նրա կյանքում, կարծես, մի նոր շրջան է սկսվում: Բայց այդ երրորդ, իսկ միգուցե եւ չորրորդ ուղին ի հայտ է գալիս կյանքի արդեն վերջին տարիներին, երբ արդեն վատացել էր առողջական վիճակը:

Մինչդեռ նրա անցկացրած կոնֆերանսն ընդլայնեց երաժշտական հնագիտությամբ զբաղվող, մասնավորապես ինչպես Հայաստանի պատմությամբ հետաքրքրվող հետազոտողների շրջանակը: Աշխարհի տարբեր կողմերից Ցիցիկյանը ստանում էր նամակներ, տարբեր կոնֆերանսների հրավերներ, մասնակցում դրանց մի մասին: Նա աշխատում է ջանասիրաբար, պատրաստում եւս մի մենագրություն՝ «Հայկական աղեղնային մշակույթի ակունքները»:

Նման ընդգրկում ու լայնածավալ գործունեության նշանակությունը դժվար է գերազնահատել: Մարդը միշտ էլ ընկալվում է այն երկրի, այն մշակույթի միջավայրում, որին նա պատկանում է: Իսկ Անահիտ Ցիցիկյանի կյանքի ուղեգծում շատ արտահայտիչ են հնչում հայկական ժամանակակից մտածողության կոորդինատները, որին ապավինելով անհրաժեշտ է միշտ տեսնել նաեւ անցյալի վեհությունը:

Մարգարիտա Ռուխկյան

Հայաստանի պարի պետական անսամբլում շատ բան է փոխվել

**Հարցազրույց անսամբլի գեղարվեստական ղեկավար
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ հետ**

- Պարոն Կարապետյան, ինչպիսի՞ ճանապարհ է անցել Հայաստանի պարի պետական անսամբլը:



- Պարի պետական անսամբլը գոյություն ունի արդեն 50 տարի եւ ունեցել է 5 գեղարվեստական ղեկավարներ: Անսամբլը հիմնադրել է եղվարդ Մանուկյանը եւ ինքն էլ եղել է առաջին գեղարվեստական ղեկավարը: Նրա գործը շարունակել է ժողովրդական արտիստ Ազատ Ղարիբյանը, որն ունեցել է շատ կարճ, բայց բովանդակալից շրջան: Վաճառելիս Խանամիրյանի ղեկավարած ժամանակաշրջանը եղել է ամենամեծ եւ բազում հաղթանակների տարիներ: Նրան հաջորդել է Սուրեն Չանչուրյանը, որի ղեկավարման տարիները կապված են երկրի դժվարությունների հետ, եղել են ամենադժվարը: Եւ արդեն 10 ամիս է, ինչ ես եմ ղեկավարը: Բայց ամեն շրջան ունեցել է իր դժվարությունները, ամեն մի ղեկավար իր հետ բերել է մոր տեսակ, փորձել խումբը յուրովի տանել հաջողության, եւ ամեն անգամ ինչ-որ մի բան փոխվել է: Վերջին 20-22 տարիներին կար մի շարուն տեսակ (հատկապես խորհրդային տարիներին). ձեւավորվել էին պարային խմբերի տեսակներ, որոնց խաղացանկում շատ մեծ մի բան կար: Դա երեւի խորհրդային տեսակն էր: Այժմ անսամբլում բավականին փոխվել է կազմը. տղաները բանակ են գնում, աղջիկներն ամուսնանում են: Այսինքն անընդհատ պետք է ունենանք պահեստային խումբ: Մենք ունեինք շատ լավ պարուհիներ, որոնք առանձնացել են մեզանից եւ ունեն անհատական խմբեր:

Մի ճանապարհ, որ պրպտումների մեջ է, հեշտ չի լինի: Շատ հետաքրքիր է պրպտումներով աշխատանքը, բայց միեւնույն ժամանակ պիտի հակասեմ ինքս ինձ եւ ասեմ, որ մաեւ հետաքրքիր չէ: Մի խոսքով՝ պարի պետական անսամբլում շատ բան է փոխվել:

- Իսկ ի՞նչն է անփոփոխ, որն ակնհայտ է եւ միայն պարի պետականին է բնորոշ:

- Մնացել է պարի պետական ասվածի բուն իմաստը: Այսինքն՝ նպատակը եղել է՝ ունենալ պարի խումբ, պահպանել հայկական դասական պարը եւ այն պրոֆեսիոնալ մակարդակով ներկայացնել թե՛ հայ, թե՛ դրսի հանդիսատեսին: Սա եղել է մնում է գերագույն խնդիրը: Ունենք պարեր, որոնք բեմադրվել են մախկինում եւ բեմադրվում են մաեւ այսօր. Է. Մանուկյանի «Կախարդված ծաղիկները», Ա. Ղարիբյանի «Իլիկներով պարը», Վ. Խանամիրյանի տասնյակ պարեր...

Պարի պետական անսամբլը մի կոլեկտիվ է, որն անընդհատ շարժման մեջ է: Իսկ լավ ելույթի համար կարելուք օրկեստրն է, պարային խումբն էլ մեծ նշանակություն ունի, բայց հաջողության գրեթե 90%-ը օրկեստրի ձեռքում է: Չմայած մենք Հայաստանի համար առաջին պարային խումբն ենք եւ վատ պարելու իրավունք չունենք: Դա մույնպես անփոփոխ է:

- Հայաստանի պարի պետական անսամբլն այս տարի Ստամբուլում համերգների էր: Ինչպե՞ս դիմավորեցին այնտեղ հայերին, եւ ինչպե՞ս անցավ համերգը:



- Փետրվարին Ստամբուլում շրջագայության էինք, որտեղ ունեցանք չորս համերգ: Դրանցից մեկը բարեգործական էր հայ բոլոր վարժարանների սաների համար, իսկ 3-ը տոմսերով համերգներ էին՝ նշանավոր դահլիճներում կազմակերպված: Մեզ շատ լավ դիմավորեցին, իսկ համերգներն անցան շատ բարձր մակարդակով, որի համար շատ ուրախ եմ: Համերգներին ներկա եղան մաեւ թուրք մտավորականներ, լրագրողներ (մրանք էլ ձեր ամսագրի պես արվեստի ամսագիր ունեն, մաեւ պարարվեստի ամսագիր), համերգները մեկնաբանվեցին լրատվամիջոցներով, երեք հեռուստաալիքով:

Համերգներից մեկի վերջում մի մարդ ինձ պատմեց, որ դահլիճում մտած էին ազգությամբ հայ, բայց թուրքական

անուններով մարդիկ: Եվ նա անընդհատ հետեւել է նրանց ու նկատել, որ հանդիսատեսը ամբողջ համերգի ընթացքում ծափահարում կամ պարում էր, իսկ նրանք միայն արտասվում էին...

- Ի՞նչ նպատակներ ու ծրագրեր ունեք եւ ինչպե՞ս եք փորձում իրագործել դրանք:

- 10 ամիս է, որ աշխատում են խմբի հետ, արդեն հասցրել են ներդնել վեց նոր պար, որոնցից չորսը բեմադրվել է, բայց դժբախտաբար առանց նոր հագուստների, քանի որ դրա հնարավորություններն առայժմ չունենք: Ցանկություն ունենք նոր համարներ ցույց տալ ժողովրդին: Ես ուզում եմ հավատալ, որ սեպտեմբեր-հոկտեմբերին 10-12 պար նոր հագուստներով ցուցադրելու հնարավորություն կունենանք:

Իսկ Ռուսաստանում եւ Ֆրանսիայում հայտարարված է Հայաստանի տարի, եւ երեւի մենք նույնպես կմասնակցենք: Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի անկախության տոնի հետ կապված, Կիեւում համերգ ունենք, այնուհետեւ կլինենք Ռուսաստանի մի քանի քաղաքներում եւ եվրոպական ու Միջին Արեւելքի մի քանի երկրներում:

Ցանկանում ենք ամռան ամիսներին այցելել մարզեր. նախկին ավանդույթն ուզում ենք վերականգնել եւ նման բան կազմակերպել գոնե տարին մեկ անգամ: Վ. Խանամիրյանի օրոք ոչ միայն մարզկենտրոններ էինք գնում, այլեւ գյուղեր, յայլաներում էինք պարում: Տարբերություն չկար՝ քաղաքի, թե գյուղի ապրողներ էին, բոլորն էլ տեսնում էին հայկական պարը Հայաստանի պարի պետական անսամբլի կատարմամբ:

Բայց չեմ ուզում ծրագրերի մասին ավելի մանրամասն խոսել, այսինքն՝ խոսել մի բանի մասին, որը դեռ չի կայացել, մեծ հաճույքով կխոսեի արդեն կատարվածների մասին:

- Ի՞նչ կցանկանայիք տեսնել հայկական պարարվեստում, որն այսօր չկա:



- Համաձայնենք, որ խմբի գեղարվեստական ճաշակը ծեւավորում է խմբի գեղարվեստական ղեկավարը եւ նույնիսկ մեծ պատասխանատվություն է կրում: Խմբերի գեղարվեստական ղեկավարները, կարծես թե, պետք է շատ տեղեկացված լինեն, լավ իմանան գործը, որն անում են: Իսկ պարը կուզենայի, որ պահպանի իր բնական ծիսական տարրերը, անպայման խոսի մի լեզվով, որը լինի համամարդկային, հասկանալի եւ ճապրոնացուն, եւ ֆրանսիացուն եւ միաժամանակ համապատասխանեցված լինի բեմին:

**Զրույցը վարեց
Ռուզաննա Մովսիսյանը**

Լեւոն Լաճիկյան

ՆԱՅԱՆՁ՝ ԵՐԳՈՎ

Խոսքն այս դեպքում ո՛չ Պարույր Սեւակի համանուն պոեմի մասին է, ո՛չ էլ Շահան Շահնուրի հանրահայտ վեպի: Պարզապես սա այն իրողության հակիրճ բանաձեւումն է, որում ականա հայտնվել է մեր հանրությունը եւ որից դուրս գալու կամային ջանքեր կարծես թե չեն գործադրվում:

Ավելին՝ երգոմանիան կամ, այլ կերպ ասած, «երգախոր» քափանցել է հանրային օրգանիզմի բոլոր հյուսվածքները եւ սպառնում է իր ճանապարհին ավերել ու ոչնչացնել դրանք: Այսօր երգում են բոլորը կամ գրեթե բոլորը՝ ջահել թե ասիլ, ծայր ունեցող թե չունեցող: Երգախտով վարակված պարման-պարմանուհիները հեռուստախցիկների առջեւ բարձրաձայն խոստովանում են, որ իրենց «կյանքը չեն պատկերացնում առանց բեմի» եւ հանում դրա «պատրաստ են ամեն ինչի»: Տազնապահարույց այս հայտարարություններն ու դատողություններն, իրոք, խորհելու տեղիք են տալիս եւ պարտադրում բոլորիս որոնել ելքեր՝ մեղմելու մեր կյանքի համատարած այս «երգայնացումը»:

«Ի՞նչ վատ բան կա դրանում», - կհարցնեն ոմանք՝ մոռանալով, որ մարդկությունն իր գեղարվեստական գործունեության ընթացքում երգից բացի արվեստի նաեւ այլ տեսակներ է ստեղծել՝ գրականություն, գեղանկարչություն, քանդակագործություն, պար, թատրոն, կինո եւ այլն: Դրանց հավասարաչափ եւ համաչափ զարգացումն ու տարածումը յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության գոյության եւ կենսագործունեության բնականոն պայմաններից են: Մինչդեռ ի՞նչ է կատարվում մեզանում: Առաջնությունը տալով այդ տեսակներից միայն երաժշտությանը՝ վերջինիս բազմաթիվ հյուսվածքից առանձնացվում է լոկ երգը եւ հրամցվում որպես արվեստի միակ ու ամփոփարիմնելի տեսակ: Այսօր «երգ» հասկացությունը դարձել է արվեստի հոմանիշ եւ արվեստ ասելով շատերն այլեւս միայն երգ հասկանում:

Նկատենք, որ երգը ինքն ունի տարբեր դրսեւորումներ՝ ժողովրդական, գուսանական, հոգեւոր, բանաստեղծական, օպերային, ջազ, ռոք, ռեփ, փոփ եւ ռաբիս: Հատկապես վերջին երկու տեսակներին քաղաքացիության «հատուկ կարգավիճակ» եւ մեմաշնորհային դիրք վերապահելու հանգամանքն է, որ մտահոգում է ինձ եւ, կարծում եմ, ոչ միայն ինձ: Ջանգվածային լրատվամիջոցների մեծ մասի (թերթեր, ամսագրեր) եւ հատկապես ռադիո-հեռուստատեսության եթերի հպանցիկ քննությունն անգամ երեւան է հանում միակողմանի ու ուռճացված այն մոտեցումը, որ հանդես է բերվում մեզանում այսօրինակ «նորին մեծություն» երգի համդեպ:

Ինչո՞վ, իրոք, երաժշտության այս թեթեւ ժանրն արժանացավ նման պատվի, գրավեց իր համար անմախաղեպ ու ոչնչով չհիմնավորված տեղ ու դեր: Առաջ էլ էր, իհարկե, այն հնչում ռադիոյով ու հեռուստատեսությամբ, առանձին համերգներով ու հիշարժան կատարումներով, հնչում մյուս արվեստների հետ ներդաշնակ ու համահունչ:

Անհարկի ուշադրությունն ու անհասկանալի (գուցե եւ հասկանալի) սեւեռումը գեղարվեստական այս երեւույթի վրա վկայում է հայ հանրության կյանքում առկա անառողջ, եթե չասենք՝

Երգարվեստ

armenian art • 2(16)/2006

հիվանդագին միտումների մասին: Այս առումով նկատենք միայն, որ շատ է գրվում ու խոսվում մեր տնտեսության թռիչքային զարգացման, տնտեսական երկնիչ թվերով չափվող աճի մասին, մինչդեռ երբեք չի խոսվում հասարակության հոգեւոր աճի, ներեցեք՝ հետաճի մասին, որն արտահայտելու համար արդեն ոչ թե երկնիչ, այլ եռանիչ թվեր են հարկավոր:

Երգը, նույնիսկ լավ երգը ժամանակավոր երեւոյթ է: Թիթեռնիկի նման մի բան, որ կարճատեւ կյանք է ունենում: Այդպիսին է ժամրի բնույթը: Երեկ կամ դրան նախորդող օրը տարբեր ռադիոալիքներով սփռված եւ հաճախակի կատարվող երգերն այսօր, ավա՞ղ, էլ ոչ ոք չի լսում: Արժե՞ ուրեմն նման սեւեռում ու բեւեռում անցողիկ այս երեւոյթի վրա, ջանքերի ու միջոցների այսչափ վատնում: Մի՞թե ժամանակը չէ մտածելու գեղարվեստական անանց արժեքների մասին, որոնք ապագա սերունդներին առավել ամբողջական պատկերացում կտան մեր ապրած օրերի ու մտորումների մասին, քան երգը: Դրանք կարող են լինել, ասենք, գրական երկը, կամ սիմֆոնիան, կամ թատերական պիեսը, կամ գիտական մի ստեղծագործություն, որոնք գուցե եւ կան, ստեղծվում են մեր օրերում, որոնք մասին, սակայն, մենք ոչինչ չգիտենք: Ողջեթերը, դրալավագույն ժամերը տրված է միայն ու միայն երգին եւ համապատասխանաբար՝ երգիչներին: Կարծես ամլացել է հայ ժողովրդի արգանդը. ո՛չ գրող է ծնվում, ո՛չ դերասան, ո՛չ էլ նկարիչ: Տեղեկատվական հեղեղից կարծես միտումնավոր հենց այն լուրերն են ընտրվում, որոնք վերաբերում են շուռ-քիզներին: Զվարճալի եւ ժամանցային ծրագրերի կողքին աններելիորեն քիչ են ուսուցողական եւ իմաստակիր հաղորդումները: Եթերում սփռվող լրատվական թողարկումները, որ հիմնականում խոսում են իշխանության քայլերի, երբեմն էլ ընդդիմության ձեռնարկած հակաքայլերի մասին, նվազագույն չափով են անդրադառնում մշակութային իրադարձություններին: Կարելի էր, օրինակ, այդ թողարկումները սկսել հենց մշակութային լուրերով եւ կարճ ժամանակ անց հանրային գիտակցության մեջ կտրուկ շրջադարձ ապահովել դեպի մշակույթն ու մնայուն արժեքները:

Իսկ ի՞նչ է կատարվում իրականում: Գիշեր-ցերեկ քննարկման միեւնույն առարկան է. հիթ-շքերթն իր երգերի տասնյակով՝ հանրային ու ոչ հանրային, թեժ ու սովորական: Զանգում են, ճշտում ու ճշգրտում, թե ո՞ր երգն է ին-

ներորդ հորիզոնականում, կամ ո՞րն է այդ շաբաթ իրաժեշտ տալու (ո՞վ մարդկային ողբերգություն) տասներորդ հորիզոնականին: Ապա լսվում է հաղորդավարի կոչ-հորդորը. «Զանգե՛ք մեզ, գրե՛ք, թելադրե՛ք ձեր ճաշակը» (իրականում, իհարկե, հակառակը պիտի լիներ): Տպավորություն է ստեղծվում, թե հայ հանրությունն այսօր երկու մասից է բաղկացած՝ երգիչներից եւ նրանց երկրպագուներից: Առաջինները զբաղված են երգելով, երկրորդները՝ «Արմենթելին» հարստացնելով: Եւ պատվում է կարուսելը՝ գծելով իր արատավոր շրջանը: Ու ելք չկա դրանից. հրամցվում է էստրադային երգը, որին անպայման հաջորդում է տեսահոլովակը, ապա էկրանին հայտնվում է դեռահաս երգիչը կամ երգչուհին, որը, որպես կանոն, եւ տեքստի, եւ մեղեդու հեղինակն է: Նա լուրջ-լուրջ պատմում է իր ստեղծագործական հաջողությունների, տեսահոլովակի ստեղծման տառապալից պատմության, աշնանը թողարկվելիք խտասալիկի եւ ծնանը սպասվող ամերիկյան հյուրախաղերի մասին: Դե ե՛կ, հեռուստադիտող, ու դիմացիր: Նման գայթակղությանն անկարող է դիմանալ մանավանդ երիտասարդությունը. բոլորն են ուզում միանգամից, առանց չարչարվելու եւ մասնագիտական լուրջ կրթություն ստանալու հայտնի դառնալ, հայտնվել Լոս Անջելեսի «Ալբես» թատրոնում, ապա հարստացած վերադառնալ տուն: Ու ավելանում է երգել ցանկացողների թիվը: Երգողներն, այո՛, շատ են, երգիչներն են քիչ:

Թիվ կա երկնքի աստղերին, թիվ չկա երկրի «աստղերին»: Եթե մեր սերունդը աստղագետ էր ուզում դառնալ, ապա ներկա սերունդը գերադասում է միայն ու միայն «աստղ» լինել: Այն էլ ոչ սովորական, այլ ոսկյա ու աղամանդյա: Այսքանից հետո էլ ո՞վ կկամենա տքնել գրադարանում կամ կրծել գիտության գրանիտը: Երգելու մոլուցքը մթագնել է մեր հազարավոր պարման-պարմանուհիների գիտակցությունը՝ ետ պահելով նրանց մարդկային գործունեության այլ բնագավառներում իրենց ուժերը փորձելու եւ դրսեւորվելու հեռանկարից: Ճիշտ է, տաղանդավոր նորանոր երգիչներ են ի հայտ գալիս, բայց ո՞վ է ասում, որ նրանք լավ ուսուցիչներ չէին դառնալու... Ես բնավ էլ այն կարծիքին չեմ, թե մարդիկ գիշերները չեն քնում էստրադա կամ փոփ երաժշտություն լսելու ցանկությունից. սերն այդ ժանրի հանդես այսօր ուղղակի արիեստականորեն պարտադրվում է, հետեւողականորեն

սերմանվում՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Խնդիրը հենց այստեղ է:

Հույն փիլիսոփա Պլատոնը իդեալական պետության իր տեսության մեջ հասարակական կառավարման մի ողջ համակարգ է ներկայացնում՝ խորհուրդ տալով ի շարս այլեւայլ հարցերի զգույշ լինել հատկապես մեղեդիների ու երաժշտական լադերի ընտրության հարցում. չէ՞ որ դրանք ի գորու են ամրացնելու կամ, հակառակը, քայքայելու հասարակության, նաեւ պետության հիմքերը: Ամենից շատ նա զգուշացնում էր գերծմալ քաղցր-մեղցր մեղեդիներից՝ կարծես կանխատեսելով ռաբիսի մեթոդյա հաղթարշավը: Այսօր երաժշտության այս տեսակը դուրս է եկել իր բնական հանգրվանից՝ ռեստորաններից ու զվարճանքի այլ վայրերից եւ հեղեղել հասարակական բոլոր վայրերն ու բեմահարթակները, ներխուժել եթեր ու դրա միջոցով բոլորիս տները:

Հեռու եմ այն մտքից, թե ամեն կերպ պետք է պայքար մղել ռաբիս երաժշտության ու դրա ծավալման դեմ: Այն, ի վերջո, այլ բան չէ, քան մեր ռաբիսացած կյանքի երաժշտական արտահայտությունը: Եթե ուզում ենք այդօրինակ երաժշտության տիրույթները սահմանափակել, պետք է, իրոք, անհաշտ պայքարել նախ եւ առաջ կյանքի ռաբիսացման դեմ, որն առկա է ամեն քայլափոխի՝ կենցաղից սկսած մինչեւ քաղաքականություն: Ռաբիսը լայն հասկացություն է: Ռաբիս մարդը միայն նա չէ, ով առավոտից իրիկուն ռաբիս երաժշտություն է լսում: Նաեւ նա է, ով աղավաղում է ոսկեղենիկ հայերենը եւ ժարգոնով է խոսում, ով իր մարտնչող անգրագիտությամբ ավերներ է գործում, ով հայրենասիրությունը վերածում է իր հիմնական մասնագիտության եւ այլն: Այսինքն՝ ռաբիսը մտածողություն է, կենսակերպ եւ ապրելաձեւ: Շուկայական կոչվող մեթոդյա «բազարային» հարաբերություններում, երբ կարծես ապրում ենք բացօթյա տոնավաճառում կամ սրճարանում, բնականաբար, չի կարող Հայդն կամ Մոցարտ, Կոմիտաս ու Խաչատրյան հնչել: Զե՛ որ սպառողական բնույթի հասարակություններում էժան ու մատչելի ապրանքն է հարգի:

Ելք, իհարկե, կա: Այն քայլ առ քայլ ինքնամաքրվելն է, վերադարձը ոգեղեն ու դասական արժեքներին: Սա գեղագիտականից առաջ բարոյական անհրաժեշտություն է: Գաղտնիք չէ, որ մաքուր երաժշտությունը, իսկական գեղարվեստը մաքուր զգացմունքներ են առաջ

բերում, սեր ու հանդուրժողականություն սերմանում, կանխում հանցավոր ամեն միտք ու մտադրություն, առողջացնում հասարակական մթնոլորտը:

Այսօր ամենակարեւոր խնդիրներից են հանրային ճաշակի բարձրացումը, գեղագիտական խորը գիտելիքների տարածումը, լուրջ արվեստի հանդեպ հասարակական պահանջի ձեւավորումը: Առանց վերջինիս ուղղակի անհնար է պատկերացնել արվեստի մնայուն արժեքների հետագա ծնունդը:

Հակված չեմ կարծելու, թե մեզանում չկան դրանք ստեղծողները: Կա՛ն, բայց ինչպես բանաստեղծն է պատկերավոր գրում:

Ժողովրդի մեջ ննջում են նրանք, ինչպես ջրի մեջ՝ անել գոլորշին:

Պարզապես մեր հասարակությունն այսօր ապրում է, նույն Սեւակի բնորոշմամբ, «հանճարեղ հոգնության» շրջանը, որին, համոզված եմ, հաջորդելու է «հանճարեղությունը»: Մինչ այդ, սակայն, ունենք այն, ինչ ունենք: Իսկ արդեն ունենք մի սերունդ, որն Իրինա Ալեգրովային ու Շակիրային ավելի լավ գիտի, քան, ասենք, Հակոբ Պարոնյանին ու Վահան Տերյանին (օրինակներն ամեն օր կարելի է քաղել «Կենտրոն» հեռուստատեսությամբ հեռարձակվող «Արդյոք ովքե՞ր են» հաղորդաշարից): Հիշո՞ւմ եք. մի ժամանակ որ բնակարանը մտնեիր, պատերին կամ գրադարակների վրա Պարույր Սեւակի եւ Հովհաննես Շիրազի (երբեմն էլ՝ Հենրիկ Դեյնի) դիմանկարները կտեսնեիր: Այսօր պատկերը բոլորովին այլ է: Մեր երեխաներն արդեն «երկրպագում են» Էնրիկե Իգլեսիասին ու Ջենիֆեր Լոպեսին, պատերից կախում Բրիթնի Սփիրսի ու Էմինեմի լուսանկարները...

Մշակույթի մասկոտներն այսօր մեկը տարիներ առաջ մի առիթով նկատեց, թե համաշխարհայնացումը չի սպառնում հայերիս, եւ այն կշրջանցի մեզ, որովհետեւ մեր երիտասարդները հայերեն երգեր են լսում: Մի կողմից՝ դա այնքան էլ այդպես չէ. մեր երիտասարդները ոչ պակաս նաեւ ռուսերեն ու անգլերեն երգեր են լսում ու նաեւ կատարում: Մյուս կողմից էլ միմիայն երգ լսելը, թեկուզ՝ հայերենով, արդեն համաշխարհայնացում է, դրա տարատեսակ, որը խոշոր հաշվով մշակութային նահանջ է նշանակում, նահանջ՝ երգով:

ԶՈՒԼԱԼ

Հայ երաժշտության եւ հատկապես երգարվեստի համար խառնիճադանջ մեր ժամանակներում, երբ բարձր երաժշտությունը բարձրագույն մակարդակով անտեսվում է ու արհամարհվում, իսկ հայ երգը՝ աղճատվում ու խեղդվում օտարածին ու ցածրաճաշակ մեկնաբանություններով, հանկարծ տարբեր անկյուններից թարմ գեփյուռ է փչում՝ հույս տալով, որ ամեն ինչ կորած չէ, որ դեռ կան հայ երգն անաղարտ ու միանգամայն ճաշակավոր մեկնաբանողներ:

Այս անգամ գեփյուռը փչեց Նյու Յորքից՝ ի դեմս «Զուլալ» առանց նվագակցության ազգագրական եռյակի (Zulal Armenian A Cappella Folk Trio): Հենց «Զուլալ» անվանված խտապնակը (CD), որ վերջերս ինձ ուղարկեց ԱՄՆ-ում գտնվող ընկերներիցս մեկը, մեծ հայտնություն եղավ ինձ եւ շրջապատիս համար: Ամերիկայում ծնված երեք հայուհիներ՝ Թենի Աբելյանը, Երազ Մարգարյանը եւ Անայիս Թեքերյանը սեփական մշակումներով երկծայն եւ եռաձայն կատարում են հայ ժողովրդական եւ գուսանական երգեր: Պարզ, անպաճույճ, գոլորիկ, սրտաբուխ եւ հուզիչ: Ջարմամալի է, թե ինչպե՞ս են Արեւմուտքում ծնված, այդ հսկայական, մարդու հոգին ճշող վիթխարի մեզապոլիսում ապրող աղջիկները հասել հայ երգի ըմբռնման մնամ խորության եւ նրբության, ստա-



ԵՐԳԵՅՈՂՈՒԹՅՈՒՆ

ցել նման վճիտ, լեռնային աղբյուրի ջրի պես անբասիր հնչողություն... Դեռեւս հարյուր տարի առաջ Կոմիտասը գրել է, որ հայ տղամարդիկ, դեռ պատանեկան հասակից, հայ երգը հաճախ կատարում են «թաթարական, ծուռ ու մուռ, անկայուն եւ անճաշակ տառախաղութեամբ... Իսկ իզական սեռը պահել է զուտ ազգային հնչիւնը» (Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա, Երեւան, 2005, էջ 344): Միայն այդ է վկայում ամերիկահայ «Զուլալ» եռյակն իր իրոք զուլալ երգեցողությամբ, որն այսօր օտար ափերում է պահպանում հայ ժողովրդական երգի կատարման ավանդները՝ մատուցելով, սակայն, միանգամայն թարմ մեկնաբանությամբ:

Մայր մեղեդուն ընդելուզված մեկ-երկու նրբին շտրիխ կամ զուգահեռ հնչող մեղեդի՝ մի քանի ինտերվալներ բարձր կամ ցածր, մեղմ ծայնառություն եւ այս կամ այն դարձվածի կրկնություն, ասես ինքնաբերական ակորդներ եւ ծայնային էֆեկտներ եւ հազար անգամ լսված, արդեն ծանրացած երգը հնչում է նորովի, ստանում թարմ գույներ, հուզում մինչեւ հոգուդ խորքերը: Ընդ որում, «Զուլալը» հավասար հաջողությամբ կարողանում է արտահայտել եւ գեղջկական-քմարական զգացումները («Իմ խորտիկ յար», «Քելեր-ցոլեր», «Սարի սիրուն յար», «Սարերի հովին մենենմ»), եւ ծիսական երգերի տարբերը (Համբարձման երգերի շարքը), եւ կատակերգերի աշխույժ ոգին: Մեզանում չարչրկված, գրեթե ռաբիսացված «Ռափամա» կատակերգը (որ միշտ անտարբեր էր թողնում ինձ) նոր շունչ է ստացել ասես հնայական թվացող խոսքերի եւ բացականչությունների համեմունով, «Ձինչ ու զինչ» երգում ասես լսելի են հայ

Երիտասարդ կոմպոզիտորների



Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը ապրիլի 21-22-ին ամփոփվեցին «Նարեկացի» երիտասարդ կոմպոզիտորների առաջին մրցանակաբաշխության արդյունքները: Մեկ տարի առաջ մեկնարկած ողջ միջոցառման գաղափարը եւ նախաձեռնությունը «Նարեկացի» արվեստի միությանը եւ «Հայկական երաժշտության նախաձեռնություն» էր: Վերջինս տեղծել են սփյուռքահայ Ջոն Հոդյանը եւ Նարեկ Հարությունյանը որպես «Նարեկացի» արվեստի միության մասնաճյուղ՝ Հայաստանում ապրող ու ստեղծագործող երաժիշտների նոր սերնդին սատարելու նպատակով:

Նախաձեռնությունը կոչված էր նաեւ բացահայտելու եւ աջակցելու երիտասարդ կոմպոզիտորներին հետեյալ ժանրերում՝

- արդի դասական երաժշտություն,
- հեղինակային երգ (երգահաններ),
- իմպրովիզացիա,

կինոերաժշտություն (ֆիլմերի երաժշտություն):

Յուրաքանչյուր անվանակարգի համար ժյուրիների 3 խմբերից (մեկը՝ հայ, մեկը՝ սփյուռքահայ, մեկը՝ օտարազգի) պահանջվել է ընտրել այն աշխատանքները, որոնք բարձրաժեռք ու յուրահատուկ են:

15 >

հեթանոսական մշակույթի հզոր ներդաշնակությունները, իսկ թեչունների ծայրերի օգտագործումը «Արի իմ տխրակ» օրորոցայինում երգը օժտել է մի նոր խորժալուր երանգով: Մեր հարսանիքների ժամանակ երգվող «Հարս եմ տանում» երգը ինձ միշտ թվացել էր էժանագին զգայացունց նեյմին, բայց ահա «Ջուլյալը» եռաձայն երգեցողությամբ այս երգով պատկերում է մեր նախատատերի ապրած ողբերգությունը, որոնք կնության էին տանում գրեթե երեխա, աշխարհից անտեղյակ, տանում էին հեռավոր բնակավայրեր, անծանոթ ընտանիքներ, որի հանդեպ անկարող է չփնտրվել զգայուն սիրտը: Երգի ողբերգական տպավորությունը սրվում է «Նամի ջան, Նամի» հանկերգի կրկնությամբ...

Եվ այս բոլորը՝ միշտ չափի մեջ: Ձսպվածություն եւ խոնարհություն: Ջզում ես կատարողների սերն ու գորովը երգվող յուրաքանչյուր հնչյունի հանդեպ: Երգերին հավելյալ հմայք է տալիս նաեւ արեւելահայերեն լեզվի արեւմտահայերեն առոգանությունը:

Ամեն ինչ սկսվել է 2002 թ. աշնանը, երբ գեղեցիկ անուններով եւ գեղեցիկ ծայրերով երեք սիրունատես հայ ընկերուհիները՝ Թեմին, Երազը եւ Անայիսը սկսել են քննարկել իրենց սերը առանց նվագակցության երգեցողության հանդեպ եւ որոշել են նվիրվել այդ գործին: Այդ ժամանակից ի

ժյուրիի հայ անդամների շարքում էին Ռուբեն Հախվերդյանը, Արա Թորոսյանը (Մուրգիկ), Վաչե Շարաֆյանը եւ Արմեն Հյուսնունցը: Ամերիկահայերի շարքում էին Արտո Թունջբոյաջյանը, Ջոն Հոդյանը, Միշել Էկիզյանը եւ Ջարեհ ճգնավորյանը: Իսկ արտասահմանցիների թվում էին Բեթ Ուիլյամսը, Ռուդի Բեդնարը, Ջոն Դիլաբերտոն, Ջոզեֆ Փարսոնսը, Ջոել Սաքսը եւ Ջոն Շաֆերը:

Մրցանակաբաշխության նպատակն էր կոմպոզիտորներին հնարավորություն տալ ստեղծելու ցանկացած ոճի երաժշտություն, հնարավորություն ընձեռել իրենց գործերը հանրությանը ներկայացնելու բարձրորակ ծայնակառակներով, նրանց սովորեցնել աշխատել նոր տեխնոլոգիաներով:

«Նարեկացի» երիտասարդ կոմպոզիտորների մրցանակաբաշխությունը կրելու է պարբերական բնույթ: Ամեն տարի 15 մրցանակակիրներ կստանան դրամական պարգև, իսկ նրանց ստեղծագործությունները կինչեն Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Հաղթող ճանաչված ստեղծագործությունները կթողարկվեն ծայնակառակով:

Մրցանակաբաշխությանը մասնակցում էին 104 երիտասարդ կոմպոզիտորներ:

Համապատասխան անվանակարգերում հաղթող ճանաչվեցին՝

«Ժամանակակից դասական երաժշտություն»՝ Արթուր Ավանեսով, Դավիթ Բալասյան, Կարեն Անանյան,

«Հեղինակային երգ»՝ Արմինե Հայրապետյան, Հայկ Հարությունյան, Լիլիթ Դանիելյան, Անուշ Ափոյան,

«Իմպրովիզացիա»՝ Մարիաննա Պողոսյան, Արեգ Առաքելյան, Մարտին Ուլիխանյան,

«Կինոերաժշտություն»՝ Հայկ Մելիքյան, Գեորգ Պետրոսյան, Լիանա Մալխասյան, Արեգ Փանյան:

Հաջողություն ենք մաղթում «Նարեկացի» երիտասարդ կոմպոզիտորների անդրանիկ մրցանակաբաշխությանը եւ նրա դափնեկիրներին:

Ռ. Մովսիսյան

վեր «Ջուլյալ» անվանված եռակն զարգացրել է իր երգացանկը, ելույթներով շրջել գրեթե ողջ ԱՄՆ-ով, իսկ նրանց խտապանակը 2005-ին Լոս Անջելեսում կայացած հայ երաժշտության տարեկան մրցանակաբաշխության ընթացքում արժանացել է «Լավագույն հայտնություն» եւ «Լավագույն վոկալ ավանդական ալբոմ» մրցանակներին, իսկ CD Baby database համացանցային կայքէջում, որտեղ 73 հազարից ավելի երգիչների եւ խմբերի խտապանակներ են ներկայացված, երկու շաբաթում այն դարձել է բեսթսելեր: Եռակն համագործակցել է պրոդյուսեր Ջեյ Արմենի (Արմեն Մեսչյան) եւ Նկարիչ Գեորգ Մուրադի հետ «Ջուլյալ» խտապանակի ստեղծման գործում, որն ընդգրկում է համերգի տեսագրությունը, համացանցային կայքէջը (<http://www.zulal.org>), երգերի անգլերեն թարգմանությունները եւ 12 ծայնագրություն: Ընդամենը 12, մինչդեռ հայ երգարվեստի անաղարտ մեկնաբանմանը ծարավ ունենողի շատ ավելին է ցանկանում լսել: «Ջուլյալը» պետք է հանդես գա Հայաստանում հայ երաժշտության աղտոտված ֆոնոսֆերայում կրկին հաստատելու համար հայ երգի կատարման ճշմարիտ սկզբունքները եւ կրկին բացահայտելու նրա՝ նորովի ու թարմ հնչելու անսպառ հնարավորությունները:

Արծիվ ԲԱՆԶԻՆՅԱՆ

Ռաֆայել Աթոյան

Կերպարվեստ



Դիմանկար ինտերիերում

Լրացավ հայ մեծանուն գեղանկարիչներից մեկի՝ Ռաֆայել Աթոյանի 75-ամյակը: Այս տարեդարձը արվեստագետը դիմավորեց իր սիրելի Հայաստանից հեռու՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ֆրեզնո քաղաքում: Մեր գիտակցության մեջ Ֆրեզնոն սերտորեն առնչվում է հայության հետ: Մեկ դարից ի վեր այս քաղաքը եղել էր մեր հայրենակիցների կենտրոնը: Այստեղ է ապրել եւ ստեղծագործել մեծն Վիլյամ Սարոյանը, քաղաքի կենտրոնում կանգնած է Անդրանիկ զորավարի արձանը:

Ուստի պատահական չէ, որ վարպետը բնակություն է հաստատել «ամերիկյան օվկիանոսում» ծվարած հայության այս գողտրիկ կղզում: Այստեղ վարպետին շնորհավորելու էին եկել նույն ճակատագրի բերումով ԱՄՆ ներգաղթած Աթոյանի սերնդակից եւ վաղեմի բարեկամ մեկ այլ հզոր գեղանկարիչ Մարտին Պետրոսյանը, տաղանդավոր քանդակագործ Երվանդ Գոջաբաշյանը, երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ՝ տաղանդաշատ գեղանկարիչ, քանդակագործ Ռաֆֆի Մուսախանյանը եւ հրաշալի գեղանկարիչ Լաուրա Դուրգարյանը:

Վարպետի տան շենին մեզ են ընդունում ինքը՝ հոբելյարը եւ նրա հյուրընկալ, ընտանիքը:

Մենք մտնում ենք ներս եւ հայտնվում ենք... Հայաստանում:

Լուսավոր սենյակի պատերից մեզ են դիմավորում Ռաֆայել Աթոյանի կտավները, ծանոթ բազմաթիվ ցուցահանդեսներից, Հայաստանի պետական պատկերասրահից, մկարչի արվեստանոցից: Բնանկարները հայրենի հողի բուրմունքն են արձակում, Հայաստանի կիզիչ արեւը ջերմացնում է մարդու հոգին:

Կենցաղային գողտրիկ մոտիվները մեզ վերադարձնում են մեր ավանդական կենցաղին, գյուղին՝ իր համ ու հոտով, Գյումրիի եւ Երեւանի ծանոթ անկյուններին, ուր պահված են մեր հիշողությունները:

Ես նայում եմ վարպետին, նրա դեմքի կնճիռներին, շռայլ ժպիտին, անկաշկանդ շարժումներին, ունկնդրում սրամիտ իմաստուն խոսքը եւ գիտակցում, որ այս ամենը ժամանակի ընթացքում կուտակված հարստության դրսեւորումն է: Կաղնու ամրությունը եւ գեղեցկությունը բնորոշում են նրա բնի վրայի տարիքային օղակները: Այդպես էլ վարպետի հարստությունը բնորոշում է նրա հոգում օղակ առ օղակ կուտակված տարիների վարպետությունը եւ հմտությունը: Այդ ուժով են բոցկլտում վարպետի աչքերը՝ տարիներ եւ լիարժեք կյանք տեսած աչքերը:

Արվեստի ազդեցության գաղտնիքը թաքնված է արվեստագետի ներաշխարհում:

Ստեղծագործողի ներաշխարհի սիրո հոսքը արտահայտչական այն միջոցն է, որ շնչավոր է դարձնում նյութը, կտավը: Արարիչստեղծագործողի կտավ-

ները սկսում են ապրել ինքնուրույն կյանքով, իրենց հերթին շրջապատին նվիրելով իրենց ստեղծողի կենսալիցքը:

Ռաֆայել Աթոյանը 60-ական թվականների Հայաստանի արվեստագետների հրաշալի սերնդի ներկայացուցիչն է: Վար-



Սբ Հովհաննես Մայր տաճարը, 1996

armenian art • 2(16)/2006

պետը սկսեց իր ստեղծագործական ճանապարհը այն տարիներին, երբ Սովետական Միությունում արվեստն ապրում էր այսպես կոչված «ծնիալ»՝ ստալինյան բռնատիրության խավարից հետո:

Հայաստանում կերպարվեստի բնագավառում հայտնվում էին նորանոր անուններ, մեկը մեկից օժտված: Մտավորականության շրջանում ստեղծվել էր ազատամտության մի մթնոլորտ, որի շնորհիվ արվեստագետները, մասնավորապես գեղանկարիչները, հենված ռուսական ակադեմիական դպրոցի հենքի վրա, փնտրում էին ինքնարտահայտման նոր միջոցներ, նոր ձևեր: Սարյանի, Կոջոյանի, Քոչարի, Թերլեմեզյանի հովանու տակ աճում եւ ամրանում էին նոր սերնդի արվեստագետները՝ Մինաս Ավետիսյանը, Ռաֆայել Աթոյանը, Երվանդ Գոջաբաշյանը, Գաբրիել Գյուրջյանը, Էլիբեկյան եղբայրները, Ռուբեն Աղալյանը, Սուրեն Նազարյանը եւ շատ ու շատ ուրիշներ: Գեղանկարչության ու քանդակագործության մեջ սկսում են գնա-

Աթոյանի արվեստը զարգանում էր՝ սնունդ քաղելով հայ մշակույթի հարուստ ավանդույթներից՝ հոգեւոր երաժշտությունից, մանրանկարչությունից, միջնադարյան պոեզիայից:

Աթոյանի ստեղծագործական ներկայակալը շատ հարուստ է հանրային մոտիվներով: Կոմպոզիցիոն այս աշխատանքները լի են զուլալ լիրիզմով, ռոմանտիկ մտորումներով, անկաշկանդ զգացմունքայնությամբ: Հատկանշական են «Պատշգամբում», «Գյումրի», «Ոչխարներ», «Ծառերը ծաղկունքում», «Ձմեռ», «Շեմին», «Աշուն», «Գյումրիի տեսարանը», «Մեր բակը Գյումրիում», «Զովանք գյուղը» եւ շատ այլ գործեր:

Գեղանկարչական խնդիրների լուծումը նկարիչը իրականացնում է սահմանափակ գույների ելեւեջներով՝ շեշտելով գույների երանգային խաղը: Եվ դրանով հասնում է արտահայտչականության բարձր աստիճանին:

Աթոյանը համարձակորեն օգտագործում է լուսի եւ ստվերի համադրումը եւ բացարձակ վարպետությամբ ստեղծում ծանոթ, սակայն առեղծվածային մի նոր, արարչական սիրով լի աշխարհ: Վարպետի թեմատիկ աշխատանքների շարքում մեծ ուշադրության են արժանացել հայկական եկեղեցիների բնապատկերները: Հայկական եկեղեցիների եւ հայոց բնաշխարհի ներդաշնակությունը վարպետի բազմաթիվ աշխատանքների թեման է: Հիշարժան են «Կարմրավոր», «Ամբերդ», «Մարմարաշեն», «Աղոթք», «Սաղմոսավանք», «Սուրբ Երան եկեղեցին Գյումրիում» եւ բազմաթիվ այլ աշխատանքներ: Սրանք հայրենի բնության եւ առեղծվածային եկեղեցիների հոգեւոր միասնության հաստատումն են: Արվեստագետի դրած խնդիրը իր գունային եւ գծային լուծման մեջ հանգեցնում է այն տպավորության, որ եկեղեցիները հողի բնական ծնունդն են: Այս աշխատանքներում գեղանկարիչը հասել է կարեւորագույն մի



Լավաշ, 1980

հատվել նոր ուղղություններ: Ժամանակակից համաշխարհային արվեստի նորույթները գրավում երիտասարդ արվեստագետների ուշադրությունը, ձեւավորում են ճաշակը:

Սակայն Ռ. Աթոյանը մնաց հավատարիմ ռեալիստական արվեստին, շարունակեց հայ գեղանկարչության ակադեմիական դպրոցի լավագույն ավանդույթները: Դրա հետ մեկտեղ Աթոյանի ստեղծագործություններում ի հայտ եկավ շատ կարեւոր մի բան՝ հեղինակային կրեդոն. այս աշխարհում ամեն ինչ ներկայումս, շաղկապված է անբերելից հոգեւոր էներգիայով: Այդ էներգիան շնչավորում է բնությունը՝ մարդկանց եւ կենդանական ամբողջական միասնությամբ: Եւ յուրաքանչյուր արվեստագետի կոչումն է վերծանել աստվածային նկատառումը, հոգեւոր իմաստը մեր առօրյա կեցության մեջ:

Այսպիսի մոտեցումը նորույթ էր այդ ժամանակվա ռեալիստական արվեստի համար եւ սերտորեն առնչվում էր 60-ական թվականներին հաստատված ազատամտության հետ:

Թեւեւ երիտասարդ գեղանկարիչը չընկավ նոր արտահայտչամիջոցներ գտնելու փնտրտուքի մեջ, սակայն նրա ստեղծագործական աշխարհը նկալում եւ ոճը առաջադիմական էր: Հոգեւոր տեսանկյունից դիտարկել եւ վերարտադրել շրջապատող աշխարհը՝ համարձակություն էր պահանջում:

Մայատակի, որը նրա հավատամքն է՝ Աստծո ներկայությունն ամենուրեք է:

Ռաֆայել Աթոյանի պոետիկ ներքնաշխարհն առավել նկատելի է գրաֆիկական աշխատանքներում: Ինտերյերի լուծումը իրականացվում է նրբագույն գծային եւ գունային միջոցներով: Արվեստագետը զգուշորեն է մոտենում նյութին, գերադասում պաստելային երանգները: Նա կարծես հյուսում է ռոմանտիկ հիշողությունների ժանյակներ, մեկը մյուսից եթերային: Աթոյանի գծանկարներում նյութականն ու եթերայինը ներկայանում են առիւնքնող ներդաշնակության մեջ:

Ասում են տարիք գոյություն չունի, դա զուտ սուբյեկտիվ զգացողություն է:

Զգիտեմ, զուցե եւ այդպես է, սակայն գեղանկարիչ Ռաֆայել Աթոյանի համար տարիքն իրոք նշանակություն չունի: Այժմ նա շարունակում է ստեղծագործել նույն թափով եւ ներշնչանքով, ինչպես տասնյակ տարիներ առաջ: Հյուսում իր եթերային ջրաներկ գծանկարները, ամուր ձեռքով կառուցում կոմպոզիցիաները, ստեղծում հոգեբանական դիմանկարներ: 75-ը պարզապես ստեղծագործական մեծ փուլի սկիզբ է մեր սիրելի վարպետի կյանքում:

Մարիամ Տեր-Գրիգորյան

ՌԱՖԱԵԼ ԱՅՈՅԱՆ



1



2



3

1. Լավ փրհ, 1973թ.
Good Harvest, 1973
2. Նստրալ նստյուններ, 1994թ.
Still Life with Pomegranates, 1994
3. Միսակ ծիրակ կամ, 1978թ.
Carriage with White Horses, 1978

Rafael
Atoyán

Ամրիկի 20,
Երեւան,
Մաքենադարան
Տե'ս Է՛ 26

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՋԵՌԱԳՐԵՐԸ

Տնօրէնական



20 April,
Yerevan,
Matenadaran

Read Page 26

NEW MANUSCRIPTS OF MATENADARAN



Exhibition



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵՎՈՒԼՆԵՐ
ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԳԻՄՆԱԴՐԱՄ
Մաշտոցի պող. 53: Գեո. (37410) 520420

FRIENDS OF MATENADARAN
BENEVOLENT FOUNDATION
Mashtots Ave. 53. Tel. (37410) 520420



ԱԼԵՔ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Հիշմունք սնդոր, 1992 / Sultry Stillness, 1992

Երազ, 1995 / Dream, 1995



Էսքիզ, 1996 / Sketch, 1996



Էսքիզ, 1992 / Sketch, 1992

**Alex
Karapetyan**


Ուե, սակայն ոչ ուեացած

Կերդարվեստ

Նկարիչ Ալեք Կարապետյան. նրա երկրային կյանքը լեցուն էր լույսով, բարությանը, վեհանձնությանը. խոսքը՝ վետովետուն երաժշտական, հայացքը միտված էր հոգեւորին: Նրան տեսնում էին երբեմնի գեղարվեստի տեխնիկումի ընկերները, քանզի նրա դասարանական առաջադրանքները միշտ էլ առանձնանում էին գունագծային խաղերի թեթեւությամբ եւ կյանքի անսովոր տրոփյունով: Նրա նկարները «երգուն» էին, գույները ծիածանվում: Սովորական պահվածքի մեջ թաքնված էր մի ազնվական հոգի, նյութից ու նյութապաշտությունից զերծ ոգեղեն սլացք, եւ այս ամենը «սովորականի», «առտնի» քողի տակ: Սակայն այս բոլորը կային նկատողներ, գուցե եւ քիչ, սակայն կային: Բնական է, որ առաջիններից մեկը մեր հանրապետության գեղարվեստի ուսուցման պարծանքներից մեկը՝ Մկրտիչ Քամալյանն էր: «Ալեքին նայեք», դիմելով մյուս աշակերտներին, - ասում էր նա: Ինքը փայլուն գեղանկարիչ, իսկ որպես նկարել ուսուցանող՝ անգուգական, շատերի հիշողություններում մինչեւ օրս մնացել է որպես էտալոն:

Նախախնամությունը երկու շնորհով էր օժտել Ալեքին՝ ինչպես նկարում էր, այդպես էլ երգում էր, մի հրաշալի բարիտոն, որը քչերին էր բախտ վիճակվել լսելու: Երկչոտ էր, ամաչկոտ, սակայն երբեմն երգի հետ «մռնչում» էր խորքից եկող թավ ձայնի հնչյուններով: Ամենկեմի սեր ուներ հատկապես Մեծն Կոմիտասի երգերի հանդեպ... Եվ տարիներ հետո, արդեն 1967-ին, գեղարվեստի ինստիտուտի դիպլոմային պաշտպանության ժամանակ նա, որպես դիպլոմանտ, ըստ կարգի պիտի ներկայացներ իր աշխատանքի սյուժեն, դրանում դրված գեղարվեստական խնդիրները. մի պահ լռում է, կարկանդակ... իրավիճակից ելքը գտնում է համաժողովի մախազահ, երջանկահիշատակ Արա Միհրանիչը (Սարգսյան). ստիպված կես կատակ, կես լուրջ ասում է ապագա նկարչին. - Ալեք, տղաս, գուցե երգե՛ս. ներկա գտնվողները մի պահ չեն ընկալում կեսկատակ ասվածը, սակայն տեղի է ունենում անհավատալի: Ալեքը կանգնում է իր դիպլոմային աշխատանքի ուղիղ մեջտեղում, ուր պատկերված էր Կոմիտաս վարդապետը եւ իր կարծեցյալ երգչախումբը, անսովոր հնչեղ բարիտոնով կատարում «Անտունին»: Մինչեւ օրս նրա դրամատիկ բարիտոնը ականջումս է՝ զուսպ, առնական, ողբերգական երանգներով, որեւէ մեկին անտարբեր չթողնող ելեւելումներով:

Սակայն այս պատմությունը երջանիկ օրերի վերհուշն էր, Ալեքի ստեղծագործական դժվարին ճանապարհի սկիզբը՝ լեցուն իմանալի եւ անիմանալի պատմեղներով, քանզի արվեստագետի ճակատագիրը ոչ միայն պայմանավորված է շնորհքով կամ տաղանդով, այլեւ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքներով: Շնորհալի արվեստագետը միշտ էլ խոցելի է, երբեմն նույնիսկ անօգնական, անհեթեթության



խոսք

հասնող պատեհություններով: Մի կողմում գեղեցիկ երազներով եւ լուսավոր գաղափարներով ապրող անհատականություն, դիմացը՝ բիրտ ու դաժան անհասկացողության պատմեղներ: Ալեքին ավելի շատ բաժին հասավ երկրորդ տարբերակը, իսկ նրա վերջին տասնամյակը որեւէ հույս չթողեց ապրելու եւ հարատեւելու այս դաժան իրականության մեջ:

Տիպիկ 60-ականների հրաշալի փաղանգից էր, որոնք նոր նկարելաոճ հայտնաբերելու ճանապարհին, բախվելով սոցաեալիստների բիրտ դիմադրությանը, նորի փնտրտուքով էին ապրում: Ամենամյա ցուցահանդեսներում նրանց իրար չնամանկող աշխատանքները առանձնանում էին թարմաշունչ ձեւերով, ընդգծված անհատականությամբ: Ալեքի՝ առաջին հայացքից ոչ հավակնոտ նկարները միշտ էլ տեսանելի էին բարի կամեցող կոլեգաներին, քանզի այդ նկարների վճիտ պարզությունը, մաքուր եւ ազնիվ գեղանկարչական որակները կեղծ, պաթետիկ հնչյուններից զուրկ էին, չունեին հավակնոտ նկրտումներ: Հոգեզուրկ, պլակատային պատկերների կողքին Ալեքի լուսառատ նկարները մեզ տեղափոխում էին իսկական արվեստի տարածքներ՝ հոգին լեցնող բույրերով եւ հնչյուններով: Իր անկախությանը երբեք չդավաճանեց նա, չարեց այնպիսի գործեր, որոնք թերեւս կարող էին նրա ծանր կենսականն ապահովել: Դժվար է նկարագրել նրա ապրած տարիները (նամանակաճ վերջին տասնամյակը) միայնակ, անօգնական, տարրական միջոցներից զուրկ, սակայն հպարտ նկարիչը թաքցնում էր այդ ամենը, որովհետեւ ի ծնե արտիստ էր, ազնվական՝ իր կեցվածքով: Շատ բան չստեղծեց Ալեքը, սակայն այդ քչերի մեջ էլ երեւում է նա հասակով մեկ:

Այսուհետեւ Ալեքին պիտի փնտրել իր փոքրաթիվ նկարների լուսավոր ու վճիտ երանգներում, որոնք հայ նոր արվեստի համապատկերում նրան ապահովելու են մի այնպիսի տեղ, որը միայն եւ միայն իրեն է պատկանելու:

Պողոս ՀԱՅԹԱՅԱՆ

armenian art • 2(16)/2006

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԿՈՐ ՊԱՏԿԵՐԱՄՐԱՅՆԵՐԸ

Գայանե Եղիազարյան

«Գեւորգյան ցուցասրահը» բացվել է 2004 թվականին, հիմնադիր տնօրեն Սերգեյ Գեւորգյանի ջանադրությամբ: Կարճ ժամանակահատվածում ցուցասրահին հաջողվեց առաջնային դիրք գրավել եւ զբաղեցնել իր հաստատուն տեղը համրային ոլորտում: «Գեւորգյանի» նպատակն է հայ հասարակությանը ներկայացնել ժամանակակից արվեստի զարգացման միտումները,

չյանը, Պորտուգալիայից՝ Օնիկ Սահակյանը եւ այլք:

Այս երկու բեղմնավոր տարիների ընթացքում այստեղ բացվել են մոտ 17 համատեղ եւ անհատական ցուցահանդեսներ: Բրիտանական խորհրդի հետ կազմակերպվել է լուսանկարի երկու ցուցահանդես, տեղի է ունեցել իտալացի գրող Ջիովանի Գուայտայի գրքի շնորհանդեսը:

Անցկացվել են երաժշտական երեկոներ, մասնավորապես Վահան Արծրունու ավանդույթ դարձած կամերային համերգները, կազմակերպվել են ցուցահանդեսի քննարկումներ, հրավիրելով տարբեր սերնդի արվեստաբանների, նաեւ նկարիչների եւ արվեստասերների: Նպատակը՝ երկխոսություն, հանդուրժողականություն եւ փոխադարձ հարգանք ստեղծելն է: «Գեւորգյան ցուցասրահը» երկու տարի շարունակ՝ 2004-2005 թթ-ին մասնակցել է Թբիլիսիի արտ էքսպոյին: Պրն. Գեւորգյանը բավարար գնահատելով իրենց աշխատանքը՝ վստահեցնում է, որ հետագա նախագծերն ու ծրագրերը խոստանում են ավելի լավ վերացնում: «Գեւորգյան ցուցասրահը առաջին հերթին ցուցահանդեսային կենտրոն է, սակայն հստակ կոմերցիոն սկզբունքներով»:


Գեղանկարիչ Վալմարը (Վլադիմիր Մարգարյանը) 2004 թ-ին իրականացրեց իր վաղեմի երազանքը՝ հիմնադրելով «Վալմար արվեստի սրահը»: Հանդես գալով բազմաթիվ երկրներում՝ մոտ 40 անհատական ցուցահանդեսներով նկարիչը կարծում է, որ միակ ճիշտ ճանապարհը «գալերեաներում» ցուցադրվելն է եւ այնտեղից վաճառք կազմակերպելը:

«Վալմար արվեստի սրահում» հիմնականում ցուցադրվում են Վալմարի եւ իր դստեր՝ Յոլիֆսինե Մարգարյանի աշխատանքները: Սակայն պարբերաբար կազմակերպվում են նաեւ այլ արվեստագետների ցուցահանդեսներ: Իսկ Յուրի Հարությունյանի, Ալվազ Ավոյանի, Լեւոն Վարդանյանի, Թոմ Գեւորգյանի գործերը ներկայացվել են Անդրկովկասյան արտ էքսպոյին:

Երկու տարում «արվեստի սրահը» հասցրել է ներկայանալ Գերմանիայի,

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի տարբեր պատկերասրահներում՝ հաճախ ներկայացնելով

4-5 արվեստագետների: Իսկ Նյու Յուրքի «Էվա» եւ «Քյու» պատկերասրահները համագործակցում են Վալմար գեղանկարչի հետ, որի խորին համոզմամբ. «Այսօր հնարավոր չէ լինել շնորհալի, տաղանդավոր նկարիչ եւ չգնահատվել: Ոչ մի նկարիչ խաղից դուրս չի կարող լինել: Նրանք ցուցադրվում են կամ Հայաստանի որեւէ պատկերասրահում, կամ արտերկրում: Առաջվանը չէ, երբ նկարիչը նստած արվեստանոցում սպասում էր, թե երբ իրեն կնկատեն: Այժմ կան շատ գալերեաներ, որոնք գնահատում, արժեւորում են եւ փայլուն գործ կատարում: Եվ եւ առաջին հերթին որպես նկարիչ իմ շնորհակալությունն են հայտնում բոլորին, ովքեր այդ գործընթացում են: Ինձ համար ուրախալի է, որ իմ ընկերներն ու կոլեգաները, այդ շնորհալի, տաղանդավոր նկարիչները այսօր ունեն հենման կետ:



ինչպես նաեւ միջազգային հանրությանը՝ հայ ժամանակակից արվեստը:

Պատկերասրահն իր շուրջն է հավաքել վերջին 10-15 տարիներին հասարակության ուշադրության կենտրոնում հայտնված, ժամանակակից ավանգարդ ոճով ստեղծագործող այնպիսի արվեստագետների, ինչպիսիք են Գագիկ Ղազանչյանը, Ալբերտ Հակոբյանը, Աշոտ Ավագյանը, Մարինե Դիվանյանը, Լիլիթ Սողոմոնյանը, Սահակ Պողոսյանը, Կանադայից՝ Կարեն Պետրոսյանը, Ֆրանսիայից՝ խեցեգործ Նինա Խեն-

Առանց գալերեաների հայ արվեստի վիճակը լիարժեք չէր լինի: Ամերկյա նրանք մեծ եղանակ են ստեղծում հայ մշակույթը ներկայացնելու եւ քարոզելու գործում: Անցել են ժամանակները, երբ որեւէ մշակութային կառույց իր քնահաճույքով ճակատագրեր կտնօրիներ, երբ ծանոթով ու բարեկամով էր ցուցահանդես կազմակերպվում կամ գործեր գնվում, երբ լավագույն նկարիչները կիսաբաղձ էին ապրում: Հիմա այլ է: Ապագան գալերեաներինն է:

Երեւանում՝ Լեոյի 52 հասցեում, բացվել է նոր մասնավոր պատկերասրահ, վերացական արվեստի նոր կենտրոն: Հիմնադիր տնօրենն է Թաթուլ Առաքյանը, որը «Նոն կոմֆորմիստական» արվեստի քարոզչությամբ է զբաղվում դեռեւս 1991 թվականից, երբ հիմնեց «Թաակ» արտ մոդեռն գալերեան, որն ակտիվ գործունեություն սկսեց հիմնականում արտագնա ցուցահանդեսներով: 1993-ից այն ներկայացավ Կիելի «Բռամա» ժամանակակից արվեստի կենտրոնում, մի քանի ցուցահանդեսով հանդես եկավ Բեռլինում մասնավորապես Քիքիի անհատականով, «Նոն կոմֆորմիզմը Հայաստանում», «Պատկերի պատկերումը որպես հակաարվեստ հայ մշակույթում» խորագրերով: 1994-ից արվեստաբանը ակտիվ ցուցահանդեսային գործունեություն ծավալեց Հայաստանում՝ նպատակային էր արվեստի գեղարվեստական լեզուն հայ մշակութային դաշտում ներկայացնելու խնդիրը:

1995-1997 թթ. իրականացվեցին մի շարք նախագծեր՝ «Հայկական դրամանիշի նախագիծ», «ԺԸ ԺԸ սակայն art», «Հետոն», «Տարողությունը» եւ այլն: 1997-1998թթ.-ին Թաթուլ Առաքյանը որպես տնօրեն զբաղվել է «Ին Վիտրո», ամսագրի թողարկմամբ: 1999-2002թթ. համագործակցել է Ուկրաինայի, Վիեննայի, Լեհաստանի մի շարք գալերեաների հետ: 2002թ-ին որոշ ժամանակ աշխատել է Վիեննայի ազգային պատկերասրահում որպես էքսպոզիցիոներ: 2003թ-ին վերադառնալով Հայաստան համագործակցության առաջարկ է ստացել «Ականաթ» գալերեայից: Սկսել է մի ցուցահանդեսաշար, որը կոչվում էր «Աբստրակցիոնիզմի զարգացման դիմադրական Հայաստանում 80-90-ականներին»: Սակայն երրորդ ցուցահանդեսից, ինչպես նշեց Թ. Առաքյանը «նկատեցինք մի բացթողում. մենք միտումնավոր չէինք ընդգրկել 60-ից 70-ական թվականները, քանզի այդ հատվածում արստրակցիոնիզմը որպես այդպիսին զուտ կեցվածք էր հակադրվելու: Հավելեմ, որ 1992 թ. իմ մի հոդվածում 70-ականների սերունդը եւ բնորոշել էի որպես «կորսված սերունդ». քանի որ 60-ականների ծննդից հետո, երբ թվում էր, թե ամեն ինչ կարելի է եւ հարաբերական ազատություն կա, մույնիսկ աչքի առաջ ունենալով արվեստի պոթենցիալները՝ զարգացման ոչ մի ուղի չէին տեսնում. եկան լծացման տարիներ, նրանք կարծես մնացին ներփակ: Այսուհանդերձ մենք որոշեցինք լրացնելով բացը ներկայացնել նաեւ 60-70-ականները, որպեսզի համեմատությունը տեսանելի լինի:

Ամեն մի ցուցահանդես ուներ իր անունը եւ կոնկրետ նպատակ էր հետապնդում.

- 1.«Բռեզ»՝ թարգմանաբար ճեղքելով ճանապարհ բացել,
- 2.«Բռեզ էքսպրեսիան» ներկայացնում էր նրանց, ովքեր ճեղքելով ճանապարհ էին բացում, յուրացնելով էքսպրեսիոնիզմի տարրերը,
- 3.«Բռեզ էքսպրեսիա մույնացում»՝ հեղինակներ, որոնց ձեռագիրը ճանաչելի է, ովքեր մույնացնում են իրենց գործերի հետ, ինչպես Քիքին՝ «բոբոյի» աշոտ աշոտը՝ «ա ֆակտու-մի» եւ այլն: 4.«Բռեզ էքսպրեսիա քալմ», որը նշանակում է հանգիստ, անդորր, բայց՝ տազնապի զգացումով: 5.«Բռեզ էքսպրեսիա ռեմինիսենս»՝ վերհուշ, որը ողջ անցած ճանապարհի՝ 60-ից մինչ 80-ականների, ընդհանուր մեկնարկն էր: Եվ վերջինը՝ «Ժեստ»: Իհարկե շատերը դուրս մնացին

ցուցադրությունից՝ մի մասը տեխնիկական պատճառներով, մի մասն էլ միտումնավոր չներկայացվեցին, որովհետեւ արստրակցիան դա միայն նկար չէ, այն մտածողություն է: Արշիլ Գորկին ասում է. «Աբստրակցիան դա մտքի ազատագրումն է եւ ժայթքումը դեպի անհայտ տարածություններ», իսկ նրանք երբեք չփորձեցին»:

Նորաբաց պատկերասրահի առաջին հարկը ներկայացնում է հինգ մեծ եւ հարմարավետ ցուցասրահներով, ապա մարմարապատ աստիճանները ուղեկցում են ներքնահարկ՝ դեպի ակումբ-սրճարանային մասը, ուր այցելուին սպասվում է իսկական անակնկալ՝ չորս սրահների եւ միջանցքի բոլոր պատերը նկարազարդված են հայ արստրակցիոնիստների, իսկայական չափերի հասնող, աշխատանքներով: Քիքիի, Արկոյի, Ճալայի, Եսայու, Ալբերտի, Թովմասյան Վարդանի, Խաչատուրի, Ավետիսյան Նարեկի եւ Ռուսենյան Վահանի «որմնանկարները» զգայացունց տպավորություն են թողնում այցելուի վրա, իսկ հարցին՝ թե՞ ինչ անուն է կրելու պատկերասրահը եւ ի՞նչ ծրագրեր կան, Թա-

ՆՈՐԱԲԱՅԸ...

թուլ Առաքյանը պատասխանեց. «Գալերեան դեռեւս անուն չունի, հույս ունեմ, որ գործունեության ընթացքը ինքը կհուշի: Այս վերջին տարում անընդհատ անուն էի մտնտում, բայց ամեն անգամ կարծես մտացածին անուններ լինեին: Տարածքը ձեռք բերվեց ընկերներիս հետ համատեղ: Երկու հարթությունները իրար հետ փոխկապակցված են՝ առաջին հարկը լինելու է մաքուր արվեստի լեզվով խոսող գալերեա, իսկ ներքնահարկում «արտ կաֆե» կամ «քլաբ», ինչպես կրկնվի, որտեղ պարբերաբար կլինեն տարբեր միջոցառումներ՝ ընթերցումներ, թատերականացված եւ երաժշտական երեկոներ, եւ իհարկե, քննարկումներ եւ այլն: «Կաֆեի» ողջ հմայքը իմ վաղեմի անդամ նախագծերից մեկի իրականացումն է՝ նկարչությունը վերադարձնել այնտեղ որտեղից սկսվել է այսինքն՝ պատին: Հետեւաբար այստեղ մտնողը կամա, թե ականա պիտի հարաբերվի արվեստի հետ, քանի որ պատի վրայի նկարը շատ ավելի ազդեցիկ է եւ նրա էներգետիկ դաշտը ավելի հզոր է, քան կտավինը:

Գալերեայի բացումը ավետում է առաջին ցուցահանդեսը, որ կոչվում է «Ինկրուստացիա», ենթավերնագիրն է՝ «Իդեայից դեպի գույն եւ գույնից դեպի իդեա»: Միտված են արստրակտ նկարչության ֆոնի վրա ինկրուստացնել հայ դասականներին՝ տեսնելու, թե որքանով են մեր նախորդները եւ նրանց շարունակողները իրար հետ համատեղվում մի դաշտում: Եւ թե ինչ շահեկան վիճակում կհայտնվեն երկուստեք:

Այս ֆոնին ինկրուստացրել են նաեւ հինգ արտասահմանցի հեղինակների՝ երկու ֆրանսիացի, մեկական ճապոնացի, ավստրալիացի, իտալացի, որպեսզի ակնառու լինի, թե ինչ կեցվածք ունեն բոլորը միմյանց հարեւանությամբ եւ մույն դաշտում հարաբերվելիս:

Հաջորդ նախագիծը լինելու է հետեւյալ հայեցակարգով՝ «Մակերեսից ծավալ եւ ծավալից մակերես»:

Բարի երթ նորաստեղծ «Untitled» պատկերասրահին:

Արշակ Բանուշյան.

«Շուրջ 452 հազար միավոր մշակութային արժեք-նյութ է պահպանվում Մատենադարանում, որը մեր ժողովրդի անգնահատելի հարստությունն է»

Ապրիլի 20-ին Մատենադարանի երկրորդ ցուցահանդեսը տեղի ունեցավ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՁԵՌԱԳՐԵՐԸ» ցուցահանդեսը, որի բացումը կատարեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդը: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով մեր նախնյաց այն ահռելի ժառանգությունը, որ պահվում է Մատենադարանում, նաև կարելու էր այստեղ կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Իր հերթին Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Սեն Արեւշատյանը շնորհակալություն հայտնեց բոլոր այն կազմակերպություններին եւ անհատներին, որոնց նվիրատվությունների շնորհիվ վերջին տարիներին համալրվել են թանգարան-ինստիտուտի ձեռագրական եւ տպագիր ֆոնդերը:

Մեր թղթակցի խնդրանքով ցուցահանդեսի, Մատենադարանի եւ «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի գործունեության մասին համառոտակի պատմեց ինստիտուտի փոխտնօրեն եւ հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուշյանը:

Ցուցահանդեսը շատ կարելու էր, որովհետեւ սա նաև երախտիքի տուրք է այն մարդկանց, ովքեր նվիրատվություններ են կատարել Մատենադարանին: Այն շահավետ դարձավ նաև այն առումով, որ ցուցահանդեսի բացումից շուրջ մեկ ամիս հետո մենք ձեռք բերեցինք եւս երեք ձեռագիր՝ նոր նվիրատուների օգնությամբ: Առաջին արձագանքողներից մեկը եղավ Մարատ Ջամվելյանը, որը 17-րդ դարում Նոր Զուղայում գրված եւ պատկերազարդված մի հրաշալի Ավետարան ձեռք բերեց Մատենադարանի համար: Երախտագիտությամբ պիտի հիշատակեն նաև Մաքսիմ Հակոբյանին, Ստամբուլից Սարգիս Գյուլեյեչին: Պետք է ասեն, որ ցուցահանդեսում ներկայացված են նաև «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի ստեղծումից (2001 թ.) առաջ կատարված նվիրատվությունները, Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի նվիրած արժեքավոր մատյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանի նվիրած Պտղոմեոսի աշխարհագրության ֆաբրիկեն, Լեհաստանի նախագահի, Արմենտելի տնօրենի եւ այլոց նվիրատվությունները: Հիշեն նաև Միլանից Սարո Խուդավերդիի եւ Արաբական էմիրություններից Պետրոս Ասլանյանի շնորհիվ ձեռք բերված՝ Լիմ անապատում 13-րդ դարում ստեղծված ձեռագիրը:

Մշակութային արժեքը իսկապես արժեք է դառնում, երբ գտնվում է համապատասխան տեղում (թանգարան, գրադարան եւ այլն), ուսումնասիրվում է եւ մատչելի դառնում նախ գիտական շրջանակներին, ապա նաև հանրությանը: Որեւէ մեկի տանը դրված ձեռագիրը դեռեւս ամբողջովին արժեւորված չէ: Սա ասում են այն պատճառով, որ մեր հայրենակիցներից ոմանք երբ գնահատելու նպատակով ձեռագիր են բերում Մատենադարան, դրանց շուկայական արժեքի մասին շատ մոտավոր (հիմնականում ուռճացված) պատկերացում ունեն:

Վերադառնալով ցուցահանդեսին ավելացնեն, որ բացման ժամանակ 2005-ի մեր քարոզարշավին արձագանքած նվիրատուները Վեհափառ Հայրապետի ձեռքից ստացան հիմնադրամի «Բարեգործ» եւ «Բարերար» անդամի վկայականներ: Որոշ իմաստով սա մի հաշվետվություն էր թե Մատենադարանի եւ թե հիմնադրամի համար: Առիթն օգտագործելով մեկ անգամ եւս ուզում են շնորհակալություն հայտնել մեր բոլոր աջակիցներին ու բարեկամներին, անկախ տրված գումարի չափից (նրանցից մեկը մի թոշակառու է Հրազդանից), որոնց մենք մտերմաբար անվանում ենք Մատենադարանի անսակարկ բարերարներ:



Գալով Մատենադարանի աշխատանքներին ուզում են ընդգծել, որ զգալի առաջընթաց կա «Մայր ցուցակ ձեռագրաց» բազմահատորյակի տպագրության ուղղությամբ, որը մեզ համար կարեւորագույն աշխատանքներից է:

Խորհրդային վերջին տարիների համեմատ Մատենադարանի բյուջեն մի քանի անգամ կրճատվել է, սակայն ի պատիվ իշխանությունների պիտի ասեն, որ վերջին 15 տարիների ընթացքում այս տարի առաջին անգամ ստացել ենք լրացուցիչ շուրջ 50 միլիոն դրամ՝ ձեռագրերի պահպանման եւ ձեռք բերման համար: Կարծում են, սա ինչ-որ չափով նաև մեր քարոզարշավի արդյունքն է, քանի որ երբ մեծանում է հասարակության հետաքրքրությունը մշակութային ժառանգության, մշակութային արժեքի նկատմամբ, իշխանությունը եւս արձագանքում եւ ընդառաջ է գնում այդ պահանջին:

Այսօր մեզ համար կենսական հարց է դառնում նոր պահոցների եւ երկրորդ կիսակառույց մասնաշենքի ավարտի խնդիրը: Մատենադարանի ֆոնդերը աճում են, անհրաժեշտ է դրանց պահպանության համար պայմաններ ապահովել: Շուրջ 452 հազար միավոր մշակութային արժեք-նյութ է պահպանվում Մատենադարանում: Սա մեր ժողովրդի անգնահատելի հարստությունն է, որի պահպանությունը ամեն մի հայ մարդու հոգածության առարկան պիտի դառնա:

Կեցցե այն նորը, որ կյանք կտա հինին՝ չթողնելով, որ այն հնանա...

ԱՇԽԱԿՈՒԼՅՔ

Արվեստի միջազգային ակադեմիան սկսել է ծրագիր, որի նպատակն է զարգացնել եւ ամրապնդել մատաղ սերնդի մեջ սերը արվեստի նկատմամբ: Սա երիտասարդական կառույց չէ, սակայն ակադեմիայի նախագահ Աբգար Ափինյանը մեծապես կարելու է երիտասարդության դերը:

Ակադեմիային կից ստեղծվել է գործունե մի շարք միավորումներ եւ միություններ՝ Գրքասերների միջազգային կազմակերպություն,

Երիտասարդ արվեստագետների աջակցության հիմնադրամ,

Երիտասարդ թարգմանիչների ասոցիացիա,

Ակադեմիակոս Է. Ջրբաշյանի անվան գրականագիտական ստուդիա,

«Ալիսիա Կիրակոսյանի բարեկամներ» միջազգային կազմակերպություն,

«Գարեգին Նժդեհ» երիտասարդական կազմակերպություն,

Երիտասարդ լրագրողների ասոցիացիա,

Գեղանկարիչների սալոն,

Թատերական խմբակ,

Ասմունքի խմբակ:

Ակադեմիայում գործում են նաեւ արտաքին կապերի՝ Իրանի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի, Հնդկաստանի եւ ԱՄՆ-ի հետ կապերի բաժիններ: Այդ երկրների հետ կապն իրականացվում է վերջիններիս դեսպանատների միջոցով: Թեհրանի հետ կապն ապահովվում է նաեւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային կենտրոնի նախագահ Ռեզա Աթուֆիի միջոցով: Վերջինս խոստացավ ակադեմիայի գրադարանը հարստացնել 500 անուն գրքով:

Ակադեմիայի նախագահ Աբգար Ափինյանը վերջերս աշատանքային այցով մեկնեց Թեհրան: Նրա ջանքերի շնորհիվ Իրանի Իսլամական Հանրապետությունում ստեղծվել է ակադեմիայի Իրանի մասնաճյուղը: 2007-ին ակադեմիան կունենա իր հիմնական շենքը բոլոր հարմարություններով: Այդ հարցում մեզ խոստացել է աջակցել հայտնի բարերար Լեւոն Ահարոնյանը:

Ակադեմիան համագործակցում է Հայաստանում Հնդկաստանի դեսպան տիկին Ռինա Պանդեյի հետ: Շուտով ակադեմիայում կներկայացվեն Հնդկաստանում ծանաչում եւ հեղինակություն ունեցող հնդկ

գրողների ստեղծագործությունները: Մեր երիտասարդ թարգմանիչների ասոցիացիայի (նախագահ՝ Աննա Եզանյան) ջանքերով այդ ստեղծագործությունները կթարգմանվեն: Նպատակ ունենք ստեղծել գրական կամուրջներ Հայաստանի եւ արտերկրի միջեւ: Թարգմանիչների ասոցիացիան ակտիվ գործունեություն է ծավալում: Երիտասարդները թարգմանում են անգլիական եւ ամերիկյան գրականության ինչպես արձակ, այնպես էլ չափածո գրվածքներ: Երիտասարդ թարգմանիչները մեծ ոգևորությամբ թարգմանում են նաեւ հայ գրականության երկեր՝ օտարներին ներկայացնելու համար:

Երիտասարդ լրագրողների ասոցիացիան (նախագահ՝ Ժաննա Սարգսյան) պատրաստվում է հանրամատչելի հաղորդումներ ներկայացնել արդի արվեստի վերաբերյալ: Հուսանք, որ երիտասարդ արվեստագետների մասին պատմող տեսանյութերը ճանաչում կբերեն նրանց: Հաղորդաշարերի նպատակը հանրությանը բարձր ճաշակ, արդի, ազգային մտածողություն մատուցելն է: Ասոցիացիայի սաներն իրենց առաջին քայլերն են անում մամուլում:

Ակադեմիայում գործում է շատ կարելու բաժին՝ «Գարեգին Նժդեհ» երիտասարդական կազմակերպությունը, որի խնդիրն է պատանիներին ու երիտասարդներին հասու դարձնել ազգային հերոսի գաղափարներ: Նժդեհականները ծրագրել են ամռանն արշավ կազմակերպել դեպի Խուստուփ լեռ՝ Գարեգին Նժդեհի հետքերով:

Ուկրաինայի հետ կապերի ամրապնդման համար մեզ սատարում է Ուկրաինայի հայոց բեմի ասաջնորդ Գրիգորիս արք. Բուցիթյանը: Նա ընդգրկվել է ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի կազմում:

Ուկրաինայում ծանաչված նկարիչ Բորիս Եղիազարյանն ու կոմպոզիտոր Սերգեյ Մացոյանը պարգևատրվել են ակադեմիայի վկայականներով եւ դարձել իսկական անդամ:

Մայիսի 12-ին Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի միությունում կայացավ գրական երեկո՝ նվիրված Տերյանի եւ Եսենինի ստեղծագործությանը: Կազմակերպչական գործը ստանձնել էր Արվեստի միջազգային ակադեմիան (ծրագրի պատասխանատու՝ ակադեմիայի սլավոնական երկրների բաժնի վարիչ Նելլի Հակո-

բյան): Միջոցառման հեղինակն է Ռուսաստանի հայրենակիցների միության նախագահ Իվան Սեմյոնովը:

Ակադեմիայի մամուլի կենտրոնն իրականացնում է քննարկումների շարք մամուլում տպագրվող կարելու հրապարակում-



**Արվեստի միջազգային ակադեմիայի
մամուլի բաժնի ղեկավար
Լիանա Մինասյանը ներկայացնում է
ակադեմիայի ընթացիկ աշխատանքները**

ների վերաբերյալ: Քննարկումների նպատակն է ոչ միայն վեր հանել խնդիրներն, այլեւ պարզել դրանց պատճառները, փնտրել լուծումներ: Մամուլի կենտրոնը շաբաթական երկու անգամ երիտասարդության համար կազմակերպում է միջոցառումներ նվիրված ազգային տոներին, մոռացված ծիսակատարություններին, նախածեռնում է գրքերի շնորհանդեսներ, նաեւ ցուցահանդեսներ, ուր ներկայացվում են երիտասարդ արվեստագետների աշխատանքները:

Ակադեմիան տպագրում է «Նոր-Դար» հանդեսը: Շուտով կթողարկվի «Ակադեմիա» հանդեսի անդրամիկ համարը:

Նախատեսվում են գիտաժողովներ եւ հանդիպումներ միջազգային ճանաչում ունեցող հեղինակավոր արվեստագետների հետ:

Մեր հավատամքը երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի պատգամն է, որ նա տարիներ առաջ ուղղել է «Նոր-Դար» ամսագրին իբրեւ օրհնության խոսք. «Ես կսպասեմ իսկական մորին, որ կյանք կուտա հինին եւ կարգիլ է հին հնացումը»:

armenian art • 2(16)/2006

«ՄՈՄԻԿ»

Հ Ա Յ Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ Ի Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ը

Լրացավ «Հայ արվեստ» հանդեսի հիմնադիր
«ՄՈՄԻԿ» մշակույթի կենտրոնի ստեղծման
15-ամյակը:

1991

Քվականի սկզբին Հայաստանը դեռևս գտնվում էր խորհրդային Միության կազմում: Սակայն դարաբաղյան հուժկու շարժման ալիքը եւ նախորդ տարի ընդունված «Անկախության հռչակագիրը» երկիրն արագորեն տանում էին դեպի անկախացում: Խորհրդային գաղափարախոսական կապանքները թոթափող մեր երկրում ազատության շունչը ոգեւորում էր նաեւ արվեստագետներին: Հայրենասիրական վերելքը առաջացրել էր ազգային ավանդույթին վերադառնալու ձգտում: Պատահական չէ, որ այդ շրջանում բազմաթիվ նկարիչներ սկսեցին անդրադառնալ քրիստոնեական թեմաներին, մի բան, որ աթեիստական գաղափարախոսություն որդեգրած խորհրդային պետության մեջ որոշակի արգելքների էր հանդիպում: Նման թեմաներով նկարները, որպես կանոն, մուտք չունեին ցուցահանդեսներ:



Անդրանիկ ցուցահանդեսի բացումը, 1991թ.

Այս շրջանում երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի հրամանով ստեղծված Ս. Էջմիածնի քարոզչական գրասենյակի պատասխանատու Աբրահամ վարդապետ Մկրտչյանին (այժմ եպիսկոպոս, Սյունյաց թեմի առաջնորդ) դիմում էին բազմաթիվ արվեստագետներ ինչպես խորհուրդներ հարցնելու, այնպես էլ քրիստոնեական թեմաներով գործերի ցուցահանդես կազմակերպելու համար: Աբրահամ վարդապետն այս գործը կայուն հիմքի վրա դնելու համար որոշեց ստեղծել հասարակական կազմակերպություն՝ ներգրավելով արվեստաբանների ու արվեստագետների: Մտահղացման մասին նա հայտնեց Հայաստանի պետական պատկերասրահի հայ միջնադարյան արվեստի բաժնի վարիչ Կարեն Մաթևոսյանին, որը ողջունեց գաղափարը եւ համաձայնեց համատեղ ձեռնամուխ լինել կազմակերպության ստեղծմանը: Որոշվեց միությունն անվանակոչել 13-14-րդ դդ. հայ բազմաշնորհ արվեստագետ՝ Ճարտարապետ, քանդակագործ, գրիչ եւ մանրանկարիչ Մոմիկի անունով:

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ հիմնադիր ժողով, կազմակերպությունն անվանակոչվեց «Հայ քրիստոնեական մշակույթի «Մոմիկ» երիտասարդական միություն»: Կանոնադրությունն արդարադատության նախարարությունում գրանցվեց 1991 թ. ապրիլի 15-ին: Նախագահ ընտրվեց Աբրահամ վարդապետ Մկրտչյանը, փոխնախագահ՝ Կ. Մաթևոսյանը:

Միության առաջին ցուցահանդեսը կազմակերպվեց 1991-ի սեպտեմբերին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանի սրահում եւ նվիրված էր մեռնոթիներին: Ցուցահան-

դեսին մասնակցելու համար հեռուստատեսությամբ հնչած հրավերին արձագանքել էին շուրջ հինգ տասնյակից ավելի ստեղծագործողներ: Գործերն ընտրեց գեղարվեստական խորհուրդը (նախագահ՝ Խաչատուր Մարտիրոսյան): Բացմանը ներկա էին եւ խոսք ասացին բարձրաստիճան հոգեւորականներ՝ Արարա-

տյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը (այժմ Ամենայն Հայոց կաթողիկոս), Կանադայի թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը (այժմ ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ), Աբրահամ վարդապետը: Ներկաներն ընդգծում էին քրիստոնեական թեմաներով կերպարվեստի ցուցահանդեսի կազմակերպման անմախաղեպ բնույթը: Ցուցահանդեսն ունեցավ հարյուրավոր այցելուներ, եղան բազմաթիվ արձագանքներ մամուլում:

«Մոմիկի» երկրորդ ցուցահանդեսը բացվեց նույն տարվա դեկտեմբերի վերջին Հայաստանի պետական պատկերասրահի Էջմիածնի մասնաճյուղում (այժմյան Գեղորգյան ճեմարանի շենքում) եւ նվիրված էր Սուրբ Ծննդյան տոնին: Չափազանց ցուրտ ծնունդն եւ չջեռուցվող շենքի պայմաններում թանգարանի հինգ սրահներում կազմակերպվեց մի ընդարձակ ցուցադրություն, որին գործեր էր ներկայացրել շուրջ 40 արվեստագետ: Ինչպես այս, այնպես էլ նախորդ ցուցահանդեսի ժամանակ դժվար էր ցուցադրանքի համար գործերի ընտրություն կատարելը: Միության ղեկավարության համար պարզ դարձավ, որ նկարիչներն ունեն քրիստոնեական արվեստի, պատկերագրության, խորհրդանշանների մասին գիտելիքների պակաս: Այդ բացը մասամբ լրացնելու համար Կ. Մաթևոսյանը եւ Ավ. Ավետիսյանը հանձն առան կազմելու մի գիրք, որը կբացատրեր տերմինական պատկերների ավանդական պատկերագրությունը եւ դրանցում առկա խորհրդանշանները: Գիրքը՝ «Ավետարանական պատկերներ» անվանումով լույս տեսավ 1992-ին, 3000 տպաքանակով, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի հովանավորու-



Ցուցահանդես էջմիածնի ճեմարանի սրահում, 1995թ.

թյամբ եւ անվճար հատկացվեց թե՛ «Մոմիկ» միության անդամներին եւ թե՛ միություն այցելած բոլոր նկարիչներին:

Նույնպիսի ճանաչողական նպատակով Հայաստանի պետական պատկերասրահի միջնադարյան արվեստի սրահներում կազմակերպվեցին քրիստոնեական մշակույթի եւ հայ արվեստի պատմությանը նվիրված ամենաբազմա դասախոսություններ: Միության անդամ Վարդան Ղուկասյանի նախաձեռնությամբ Աջափնյակում հիմնվեց մանկական նկարչական դպրոց:

Հարկ է նշել, որ «Մոմիկ» այդ տարիներին գործել է նյութական չափազանց սուղ միջոցներով, իսկ միջոցառումների՝ ցուցահանդեսների, դասախոսությունների համար կազմակերպությանը սրահներ են տրամադրվել անվճար: Բոլորի համար պարզ էր, որ կազմակերպությունը զբաղված է ազգօգուտ եւ անշահախնդիր աշխատանքով (շուկայական հարաբերությունները դեռեւս չէին կլանել Հայաստանը):

1992 թվականը եւ հաջորդ տարիները նույնպես հարուստ էին ցուցահանդեսներով, որոնք կազմակերպվում էին ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ Գյումրիում, Գորիսում, Ծաղկաձորում, Օշականում, Վանաձորում, Արմավիրում, Ստեփանակերտում եւ այլուր: Միությունը քրիստոնեական թեմաներով ստեղծագործող հայաստանցի արվեստագետների գործերը ներկայացրեց նաեւ Սփյուռքում:

Առաջինը 1992-ին կանադահայոց թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի հրավերով Կանադայի Մոնրեալ եւ Տորոնտո քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներն էին: Այդ ժամանակ միությունը Քրիստոսի Ծննդյան պատկերը ներկայացնող հինգ աշխատանք նվիրեց Մոնրեալի գլխավոր՝ Սեն ժոզեֆ եկեղեցու թանգարանին, որի շնորհիվ տեղի մշտական ցուցադրության մեջ 63 այլ երկրների կողքին բացվել է նաեւ հայկական բաժին, իսկ թանգարանի մուտքի մոտ դրվեց նաեւ հայոց եռագույնը: Կանադահայոց առաջնորդարանը եւ «Մոմիկ» միությունը հետագայում եւս գործակցության բազմաթիվ առիթներ ունեցան:

1997-ին ստեղծվեց միության ցուցահանդեսային բաժինը (վարիչ՝ Հասմիկ Գինոյան): Միությունը «Նորավանք-99»

կոչվող մշակութային միջոցառումների համալիր ծրագիր իրականացրեց 1999-ի ապրիլին, Տիգրան եւ Դիանա Հաճեթյանների հովանավորությամբ նորոգված Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու օժան առիթով: Կազմակերպվեց եռօրյա գիտաժողով՝ Հայաստանի ճանաչված գիտնականների մասնակցությամբ, երկու ցուցահանդես, «Նորավանք-99» գրքի շնորհանդեսը եւ այլն: Տպագրվեցին գիտաժողովի զեկուցումների դրույթները, Նորավանքի ճարտարապետին նվիրված «Մոմիկ» գրքուկը եւ այլն:

Միությունը կազմակերպեց Հայոց դարձի 1700-ամյակին նվիրված ցուցահանդեսներ 2000 թ. նոյեմբերին Սիրիայում եւ Լիբանանում (Հալեպ, Դամասկոս, Բեյրութ), 2001 թ. մարտին Սոչիում (Ռուսաստան),

հրատարակեց մանրանկարչական պատկերազարդ օրացույց: Արտասահմանյան ցուցահանդեսներից արժանահիշատակ են նաեւ 1998-ին Բեյրութում, 2000 եւ 2004 թթ. Կանադայում, 2005-ին Դանիայում, 2006-ին Ավստրալիայում կազմակերպված ցուցահանդեսները (ընդհանուր առմամբ միությունը կազմակերպել է շուրջ 40 ցուցահանդես):

2001-ի սեպտեմբերին միության 10-ամյակին նվիրված էջմիածնում կազմակերպված ցուցահանդեսի ժամանակ հայտարարվեց, որ միությունը մտադիր է հիմնել «Հայ արվեստ» մշակութային հանդեսը: Անդրանիկ համարը լույս տեսավ 2002-ի մայիսին, շնորհանդեսը կայացավ մշակույթի նախարարության դահլիճում (զուգորդվելով «Մոմիկի» հերթական ցուցահանդեսի հետ): Ներկա էին Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը եւ մշակույթի նախարար Ռուանդ Շառոյանը:

2000 թ. հասարակական կազմակերպությունների վերագրանցման ժամանակ օրենսդրական պայման էր դրվել, որ չպետք է օգտագործվի «միություն» բառը: Այդ ժամանակ կազմակերպությունը վերագրանցվեց «Մոմիկ» հայ մշակույթի կենտրոն» անվանումով:

«Մոմիկի» գրասենյակը գտնվում է Երեւանի կենտրոնում (Հանրապետության 32): Այստեղ է նաեւ «Հայ արվեստի» խմբագրությունը:

Միության 10-ամյակի ցուցահանդեսի բացումը էջմիածնի պատկերասրահում, 2001թ.



ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՎԱՏՐԱԼԻԱՅՈՒՄ

Մարտի 17-19-ը Սիդնեյի «Ավստրալիա-Արմենիա» սրահում (Արշակ եւ Սոֆի Գոլստն կենտրոն) տեղի ունեցավ ժամանակակից հայ նկարիչների ցուցահանդես: Հայաստանյան կողմից կազմակերպիչը «Հայ արվեստ» հանդեսի խմբագրությունն էր, ավստրալիական կողմից՝ նկարչուհի Միլանդա դե Մոնթը (հրավերն ուղարկել էր Սիդնեյի ՀԲԸՄ-ն): Հայազգի արվեստագետը հաջողությունների է հասել Ավստրալիայում եւ 2004-ին առաջին անգամ Հայաստան գալով ու ժամանակակից հայ կերպարվեստին ծանոթանալով այս ցուցահանդեսը կազմակերպելու մտահղացումն ունեցավ: Նրա ամուսնու՝ Պիտեր դե

Մոնթի, ինչպես նաեւ Արշակ եւ Սոֆի Գոլստն՝ ավստրալահայ համայնքում հայտնի բարեգործների հովանավորությամբ կայացած ցուցահանդեսը բացվեց պատշաճ շուքով: Ներկայացված էին Փ. Միրզոյանի, Գ. Ղազանչյանի, Վալմարի, Հ. Հարությունյանի, Ա. Հակոբյանի, Ն. Աղաբաբյանի, Թ. Վարդանյանի, Խ. Մարտիրոսյանի, Ս. Գասպարյանի, Ա. Ղազարյանի, Արցախից՝ Ս. Առուստամյանի, Գ. Սարգսյանի ստեղծագործությունները: Սա հայ ժամանակակից նկարչության առաջին մասն ընդգրկմամբ ցուցահանդեսն էր հեռավոր Ավստրալիայում, ուր մեր հայրենակիցների թիվը հասնում է շուրջ 40 հազարի:

«ՊԵՐՑՈՐՄԱՆՍ» ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

Հունիսի 7-ին Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ ավստրալահայ նկարչուհի Միլանդա դե Մոնթի անհատական ցուցահանդեսը: Բացումը ինքնատիպ էր, Ջիվանու եւ Սայաթ Նովայի երգերի ուղեկցությամբ, Սոֆի Դեռոյանի դպրոցի շնորհալի պարուհու զեղեցիկ կատարման զուգընթաց նկարչուհին երեք խոշոր կտավների վրա յուրովի վերարտադրեց կատարված պարը, փաստորեն համադրելով երգը, երաժշտությունը, պարը եւ նկարչությունը: Երեւանյան արվեստասերները հետաքրքրությամբ եւ զնահատանքով ընդունեցին Միլանդա դե Մոնթի արվեստը:

Նկարչուհու մասին այլ մանրամասներ կարելի է տեսնել www.milandademont.com կայքում:



ՀԱՅ ԽԵՑԵԳՈՐԾՈՒՅՈՒ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԵՂՈՆԻԱՅՈՒՄ

Ապրիլի 26-ին Մակեդոնիայի Բիտոլա քաղաքում տեղի ունեցավ արվեստագետների միության անդամների




Արմինե Մակեդոնիայի մշակույթի նախարարի հետ:

րի ցուցահանդեսը, որին մասնակցել է նաեւ մակեդոնաբնակ հայ խեցեգործուհի Արմինե Փիլոյան Վրտեսկան: Այցելուները մեծ հետաքրքրությամբ դիտել եւ գնել են Արմինեի պատրաստած խեցեգործական եւ բիժուտերիական աշխատանքները: Ցուցահանդեսից հետո տեղական հեռուստակայանը Արմինե Փիլոյանին հրավիրել է հարցազրույցի, որի ընթացքում նա պատմել է հայ կիրառական արվեստի մասին:

Արմինե Փիլոյանը ծնվել է Արմավիրում, ավարտել Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի եւ գրականության բաժինը: Մասնակցել է ամերիկահայ թարգմանչուհի-բանաստեղծուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանի կազմած՝ հայ բանաստեղծուհիների ժողովածուի թարգմանության աշխատանքներին: Տեղափոխվելով Մակեդոնիա՝ սկսել է զբաղվել կիրառական արվեստով, դարձել տեղի հայ համայնքի ակտիվիստներից:

Գաղտնիք չէ, որ նոր սերունդը քիչ է կարդում: Բայց հայկական գրադարանային հիմունքները և անդամները: Տպագրվում են ամենաբազմազան գրքեր, բարեբախտաբար նաև մասնագիտական լուրջ ուսումնասիրություններ, հատկապես պատմության բնագավառում: Վերջին հրատարակություններից կարելի է առանձնացնել հատկապես Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները եւ հայերը» (Ի. Ա. Երեւան, 2005) եւ Ռիչարդ Գ. Յոլիանի «Հայաստանի Հանրապետություն, Ի. Ա. առաջին տարին, 1918-1919, (Երեւան, 2005):

Հրատարակվում են նաև հայ մշակույթի ամենատարբեր ոլորտներին վերաբերող գրքեր: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:



Արգամ Այվազյան, Գիտելու Գողթն (պատմաագագագական ակնարկ, լուսանկարչական պատկերագիր), Ինդի-Մակային հրատ., Երեւան, 2006:



Շամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին, կազմեցին Ս. Սահաղեյանը եւ ուրիշներ, ՀՀ ԳԱԱ արվ. ինստիտուտ, Երեւան, 2005:




Հրապարակաբան, Մուրադ Ջալալյան, Համաշխարհային հայ աղբյուրի պատմությունը, Ինդի-Մակային հրատ., Երեւան, 2005:

ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Վերջին շրջանում գիտական տարբեր հաստատությունների ու առանձին անհատների նախաձեռնությամբ լույս են տեսել հիմնականում հայագիտական նյութեր ընդգրկող մի շարք ժողովածուներ: Ճիշտ է, դրանք տպագրվում են փոքր տպաքանակով եւ հասկանալիորեն ընթերցողների սահմանափակ շրջանակ ունեն, սակայն նման ժողովածուների ծնունդը վկայում է մեզանում գիտական մտքի որոշակի աշխուժացման մասին:




Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա, Տարեգիրք, Երեւան, 2005:




ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական մշակույթ, 13, (Ղորենիկ Վարդույանի իշխատակից), Երեւան, 2006, 280 էջ:




Հայաստանի ազատագրողական տարածքը եւ Արցախի ինքնավարությունը, վերլուծական եւ փաստագրական նյութերի ընտրանի, կազմող եւ խմբագիր Արմեն Այվազյան, Երեւան, 2006, 370 էջ:



ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, «Հուշարձան» տարեգիրք, Գ, խմբագիր՝ Հակոբ Միմոնյան, Երեւան, 2005, 226 էջ:



ՀՀ ԳԱԱ արվեստագիտության ինստիտուտ, Ակարտիկոս Ս. Սահաղեյանի 140-ամյակին նվիրված ժողովածու, խմբագիր՝ Պարույր Մուրադյան, Երեւան, 2005, 220 էջ:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, ֆիլմ, խմբագիր՝ Գրիգորյան, Երեւան, 2005, 340 էջ:

Վերագնված ԿՈՄԻՏԱՍԸ



Կոմիտասը հայ դասական երաժշտության մարմնավորումն է, նրա ազգային ոգու կրողը իր մտածողությամբ ու ստեղծագործությամբ: Նրա արվեստը հրաշքով կարծես ներառել է գողթան երգերի հարստությունը, հայ միջնադարյան տաղասացների մեղեդիներն ու աշխարհընկալումը, 20-րդ դարի եվրոպական արվեստի ճաշակն ու հարստությունը:

Կոմիտասը հայ համճարի ծնունդն է. ահա այս գիտակցումն անվանի արվեստագետ Սարգիս Նաջարյանին ուղեկցել է շատ վաղ հասակից: Նա հասունացել է՝ միշտ իր կողքին ունենալով Կոմիտասի երգն ու ոգին, եւ դրա մեջ եղել է ազնվագույն մի մղում՝ վերակերպավորել իր չտեսած, բայց ճանաչած Կոմիտասին, նրան ներկայացնել հայ հանրության բոլոր խավերին: Նա ջանասիրաբար հավաքել է նյութեր Կոմիտասի կյանքի եւ գործի մասին, խորացել նրա արվեստի գաղտնիքների մեջ, անգամ փորձել մտնել նրա կերպարի մեջ, գտնել նրա հրաշքի դարպասներ:

տուհու՝ Մարգարիտ Բաբայանի դերը կատարում է Ժենյա Ավետիսյանը, իսկ Փանոս Թերլեմեզյանին կերպավորել է Յուրի Ամիրյանը: Այս երեք դերասանները խոսում են հրաշալի, քաղցրահունչ հայերենով:

Կինոնկարում տեղին են օգտագործված հայ մշակույթի մեծ երախտավորներից մեկի՝ Արշակ Զոպանյանի հուշերը Կոմիտասի մասին: Դիտողը ծանոթանում է նաեւ Կոմիտասի գործին եվրոպացիների տված գնահատականներին՝ հատկապես ֆրանսիացի նշանավոր երաժշտագետ Լուի Լալուայի, նշանավոր կոմպոզիտոր Կլոդ Դեբյուսիի, գերմանացի երաժշտագետ Մաքս Ջալֆերդի կարծիքներին: Սարգիս Նաջարյանը պեղել է նաեւ արխիվային նյութեր, մա չի մոռացել ոչ մի կարելու մանրամասնություն:

Կինոնկարում տեսնում եք այն դաշնա-



Կադրեր կինոնկարից:



րը բացող բանալին եւ գտել է: Դեռ երիտասարդ Սարգիս Նաջարյանը, որը նոր էր բոլորել 30 տարին, որոշում է ֆիլմ նկարահանել Կոմիտասի մասին, նկարահանել արվեստի ինքնատիպ մի գործ, որում փաստագրականը լինելու է առաջատարը, իսկ գեղարվեստականը միայն լրացումը: Նա կինոնկարի սցենարիստն է, բեմադրիչը (երկրորդ բեմադրիչը եղել է Լենա Ջիգարյանը), երաժշտական խմբագիրը եւ ամենակարեւորը՝ Կոմիտասի կերպարը մարմնավորողը:

Կինոնկարը նկարահանվել է 1989-ին: Սակայն ժապավենը այն թվականների համար հասկանալի հիմքով «վնասվածք է ստացել ու ջնջվել»: Բարեբախտաբար նվիրյալ բեմադրիչը, թվում է թե աստվածային նախախնամության թելադրանքով պահպանել է սեփական օրինակը, որը հանդիսատեսին ներկայացվեց 2006-ի ապրիլի 22-ին՝ «Նարեկացի» արվեստի միության հյուրընկալ դահլիճում: Կինոնկարը տևեց 1 ժամ 20 րոպե, սակայն այն դիտողը կհիշի ընդմիշտ... Դահլիճը մեծ չէ, իսկ հանդիսատեսը բազմաբանակ էր, շատերը դիտում էին կանգնած: Կոմիտասի ոգին, կերպարը, նրա աստվածային երաժշտությունը կլանում է դիտողին: Կինոնկարի փաստական մասը ներկայացվում է դերասանական այլ կերպավորումներով: Իր հրաշալի խոսքով որպես Մանուկ Աբեղյան հանդես է գալիս Վլադիմիր Աբաջյանը, Կոմիտասի սիրելի աշակեր-

մուրը, որը Կոմիտասին է նվիրել հայ նշանավոր բարերար Մանթաշյանը. այն հիմա պահվում է Եդիշե Զարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում:

Կոմիտասյան երգերը հնչում են հնագույն ձայնագրություններով՝ հենց հեղինակի եւ Արմենակ Շահմուրադյանի կատարմամբ: Ֆիլմի երաժշտական ձեւավորման մեջ օգտագործվել են այն ձայնակավառակները, որոնք

ԱՐԺԱՆԹԻՆԱՅԱՅ ԴԵՐԱՍԱՆ ՄԱՐԹԻՆ ԱՃԷՄԵԱՆ

Արժանթինեան բեմի ու պաստառի վրայ քիչ են հայազգի անունները: Այդ ոլորտի ամենն ծանօթներն մէկը Մարթին Աճէմեանն էր, թատերական ու շարժապատկերային իր յիսնամեայ վաստակով, որ իր մահկանացուն կնքեց 2005 թ. դեկտեմբեր 3-ին:

Աճէմեանի անունը առաջին անգամ կարդացած էինք 1980-ական թուականներուն, երբ Պուէնոս Այրես այցելած սպանացի բեմադրիչ Իմանուէլ Ուրիպէ կը յիշէր զայն որպէս հայ անունին խորհրդանիշ մը Սպանիոյ մէջ: Յայտնի չէր մեզի այն ժամանակ, որ Աճէմեան մաս կը կազմէր հարկուաւոր մտաւորականներու եւ արուեստագէտներու այն փաղանգին, որ 1976-ի գինուորական բռնաշրջումի կանխազգացումով կամ անոր հետեւանքով ընտրած էր տարագրութեան ճամբան:

Իր մասին այս համառօտ հաղորդումը պատրաստած ենք հիմնուելով Պուէնոս Այրեսի «Լա մասինո» օրաթերթի դեկտեմբեր 23-ին լոյս տեսած մահախօսականին վրայ¹:

1955-ին երկու երիտասարդ դերասաններ՝ Լիթօ Գրուս եւ Ֆետերիքօ Լուփի, ծանուցում մը դրած էին Պուէնոս Այրեսի մերձակայ ու երբեմնի հայաշատ Պերիսօ քաղաքի թերթերէն մէկուն մէջ, դերասան մը փնտռելով: Այդպէս է, որ նոյնպէս մերձակայ Լա Փլաթա քաղաքի գիշերային ակումբներուն կամ հրապարակներուն մէջ նրբասրինգ (clarinet) նուագելով իր վաստակը շահող Մարթին Աճէմեանը կը միանար անոնց, հիմնելով «Equipo» թատերասարհը, ուր պիտի բեմադրէին արժանթինցի յայտնի հեղինակներու գործեր, ինչպէս Ակուստին Գուցանի եւ Օսվալտօ Տրակուն:

1960-ին Գրուս եւ Աճէմեան Պուէնոս Այրես փոխադրուեցան, միանալով հռչակաւոր բեմադրիչ Դետի Գրիլլայի գլխավորած «Գիմակը» խումբին, որուն մաս կը կազմէին այլ յայտնի բեմադ-

րիչներ, ինչպէս Աուկուստօ Ֆերնանտէս եւ Գարլոս Կանտոլֆօ: Գիշերները երկու դերասանները բեմ կը բարձրանային, մինչ ցերեկները սաւաններ կը վաճառէին:

1960-ականներու վերջերուն, Աճէմեան առաջին անգամ նկարահանուեցաւ «Los taitas» վերնագրուած միջին տեսողութեամբ ֆիլմին մէջ: Այնուհետեւ դերեր ունեցաւ այլ շարժանկարներու մէջ, որոնցմէ Խուան Խոսէ Խուսիտի «Յրեայ կանուշները» (1975) այդ ժամանակաշրջանի իր կարապի երգը կը դառնար: «Բոլոր գիրքերը այրէ», որովհետեւ ասիկա շատ դաժան պիտի ըլլայ», հեռածայնով կը հաղորդէր իր բարեկամ Լ. Գրուսին:

1976-1983-ի բռնատիրութեան նախօրեակին էր: Այսպէս է որ իր կնոջ՝ դերասանուհի ճուտիթ Ուայների հետ Սպանիա փոխադրուեցաւ, որ իր բնակավայրը պիտի ըլլար 1975-1989-ին: Իր դերասանական ոճը դարձ մը դարձաւ բազմաթիւ սպանացի արուեստագէտներու համար, որոնց շարքին՝ Օսկարի մրցանակակիր Խալիէր Պարտեմը:

Տարիները անցան եւ նոր հեռածայն մը Լիթօ Գրուսին. «Լիթօ, նոյնիսկ հունորի զգացողութիւնը կորսնցուցած եմ»: Այդպէս է, որ այդ ու կին որոշեցին վերադառնալ Արժանթին:

1990-ական թուականներուն Աճէմեան բազմաթիւ թատերախաղերու եւ շարժանկարներու, ինչպէս եւ հեռատեսիլային հաղորդումներու մէջ դերեր ստանձնեց: Ֆիլմերուն շարքին պէտք է



յիշել «Մոէպիուս», «Փիցա, գարեջուր, ծխախոտ», «Ճահիճը», «Ժառանգ», «Շնանցը», «Քաջերուն ժամանակը» եւ «Կրտսեր բոյրը» (վերջինս դեռ ցուցադրուած չէ): Ան շարունակեց աշխատիլ մինչեւ որ անողոր քաղցկեղը յայտնուեցաւ ու կարճաժամ ժամանակի մէջ պարտադրեց «Ճամբորդու-



թեան մեկնելու», ինչպէս կ'ըսէր, դարձեալ հեռածայնով, իր հինաւուրց բարեկամ Լիթօ Գրուսին: Դեկտեմբեր 12-ին պիտի դառնար 73 տարեկան:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ
ՆԻ ԾՆՈՂԻ, ԱՄՆ

¹ Աճէմեանի մասին այլ տուեալներ տես՝ Արծուի Բախշինեան, Դայերը համաշխարհային կինոյում, Երեւան, 2004, էջ 575:

թողարկվել են 1912-ին, Բլումենտալ եղբայրների ծայրասկավառակային ընկերության կողմից:

Էկրանի վրա երեւում են Կոմիտասի կերպարի նկարչական վերամարմնավորումները Դայաստանի ազգային պատկերասրահի բնօրինակներով՝ Եղիշե Թադեւոսյանի եւ Փանոս Թերլեմեզյանի ներշնչումով ստեղծված:

Կինոնկարը պատկերում է կենսասեր հանճարին Դայաստանի բնապատկերի տարբեր տեսարաններում: Կոմիտասը շարունակ քայլում է, շրջում տեղից-տեղ, նա ժողովրդի մէջ է, ականջը՝ նրա խոսքին ու երգին: 1905-ին Վաղարշապատում լոյս է տեսնում Կոմիտասի եւ Մանուկ Աբեղյանի ջանքերով հա-

վաքված հայ բանահյուսական գոհարների հարուստ ժողովածուն՝ «Հազար ու մի խաղ» խորագրով: Հորովելներ, անտունիներ, պանդուխտի երգեր, ջանգլուկներ, սիրո, հարսանեկան երգեր, անման խաղիկներ, որոնց բնագրերը մարդու ակամեջին հնչում են կոմիտասյան սրտառու մեղեդիներով:

Կինոնկարում շարունակ երեւում է մանկամարդ Սոմա յարը, որը խայտում է բնության կանաչ համայնապատկերի վրա, նա նույնպէս սիրահարված է, ինչպէս երիտասարդ վարդապետը, եւ այդ սերը եթերային է, հոգեւոր ջերմություն պարգեւող, կյանքը առավել սիրելի դարձնող:

Սարգիս Նաջարյանը վերագտել է մեծն

Կոմիտասին, որը նույնպէս պարում է, նա թվում է թե երջանիկ է՝ շարունակ ու շարունակ ծնվող բանաստեղծական ու երաժշտական գյուտերից, իրեն բավարարված է զգում ժողովրդից վերցրած նրան բարձր արվեստով վերադարձնելու համար: Կինոնկարն ավարտվում է լավատեսորեն, թեւեւ մեծ կոմպոզիտորն ու մտավորականը զոհ դարձավ Եղեմին, սակայն այդ դրվագը կինոնկարում գիտակցված ձեւով չի շեշտված, որովհետեւ Կոմիտասը եւ նման անհատները չեն մեռնում, նրանք հավերժ են այնքան, որքան ապրելու է նրանց ծնող ու փայփայող ժողովուրդը:

ԱԼԵԽԱՆ ԴՈԼՈՒՄԵՆՅԱՆ
Բանասիրության դոկտոր

Հայ տարազի ուսումնասիրության նվիրյալը՝ Ֆլորա Գրիգորյան



Նկարիչ Ֆլորա Գրիգորյանի անունը այնքան էլ ծանոթ չէ լայն հասարակությանը: Արվեստի նվիրյալների անունները հայտնի են դառնում երբեմն պատահականորեն, կամ էլ նրանց մահից հետո: Այդպիսի մարդիկ գովազդ չեն սիրում, այլ աշխատում են, ստեղծագործում հանուն արվեստի եւ այն գեղեցիկ ու չքնաղ գործի, որին նվիրվում են ամենացորդ: Այդպիսին էր նաեւ Ֆլորա Գրիգորյանը, որը ողջ կյանքում զբաղվել է հայ տարազի վերականգնմամբ եւ վերամշակմամբ: Նա բառիս բուն իմաստով վարպետ էր, բազմաբնույթ եւ բազմակողմանի նկարիչ՝ գրաֆիկ, թատերական նկարիչ, գեղանկարիչ, ռեստավրատոր, ազգագրագետ: Այնուամենայնիվ, նա կենտրոնացավ հատկապես հայ տարազի վերականգնման եւ պահպանման գործի վրա՝ այն առաջնային համարելով: Դա այն արվեստն է, որը փոխանցվելով սերնդից սերունդ, պահպանել է ոչ միայն մեր ավանդույթները, այլեւ ազգի ոգին, մշակույթը եւ ինքնատիպությունը:

Հին Հայաստանի յուրաքանչյուր գավառ, գյուղ թե քաղաք ունեցել է իր ինքնատիպ հագուստը, որի միջոցով առանձնացել է հարեւաններից: Տարազը նաեւ արտահայտել է տեղի կլիմայական եւ կենցաղային առանձնահատկությունները, մարդկանց ապրելակերպն ու բնավորությունը:

Ֆ. Գրիգորյանը մանրամասն ուսումնասիրությամբ վերականգնել է հայ ավանդական տարազը, ստեղծել հրաշալի պատկերներ: Այդ աշխատանքների շնորհիվ մենք կարող ենք սերունդներին փոխանցել ամենամանրակրկիտ ուսումնասիրություններ հայ զգեստի բնագավառում: Դա առանձնապես կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ այժմ դրանք թերեւս արդեն միայն նկարներում են պահպանվել իբրեւ հիշատակ տարազային մշակույթի: Արեւմտահայաստանի տարազի ուսումնասիրության միջոցով բացահայտվում է նաեւ թուրքերի իրականացրած մշակութային ցեղասպանության մեկ այլ «ուղիղ», քանզի բնիկներին վերացնելով թուրքիան աշխարհին ուզում է ապացուցել, թե ինքն է տեղի տարազային մշակույթի ժառանգորդը:

Ֆ. Գրիգորյանը մանրակրկիտ ուսումնասիրել է Հայաստանի գավառների զգեստների առանձնահատկությունները, թե՛ կտորի եւ գույների հարստությունը, թե՛ զգեստների զարդերը: Ամեն գավառ ունեցել է ուրույն՝ մյուսներից տարբերվող զարդերի եւ գույների առանձնահատուկ համադրություն: Ձարդերը ոչ միայն տվյալ տարածքի առանձնահատկություններն են ընդգծում, այլեւ առանձին ընտանիքի եւ տոհմի հատկանիշները, որոնք տարբերում են հարուստներից աղքատներից: Ամեն մի զգեստ՝ կնոջ թե տղամարդու, երեխայի թե ծերունու,

հանգամանորեն ուսումնասիրված է ինչպես պատմական, այնպես էլ ստեղծագործական տեսանկյունից: Հավաքելով եւ վերականգնելով զգեստների տարբեր տեսակները՝ նկարչուհին մոռացությունից փրկեց մեր արվեստի այս ինքնատիպ ճյուղի բազմաթիվ նմուշներ: Պատմական այս հագուստները վկայում են այն մասին, որ հայերը դեռ վաղ ժամանակներից ունեցել են հագնվելու յուրօրինակ ավանդույթ, որն այսօր կոչվում է նորածեւոթյուն: Ամեն ոք ունեցել է իր հագուստը՝ հարուստ ու աղքատը, վաճառականն ու արհեստավորը, ամենօրյա հագուստը տարբերվել է տոնականից:

Յուրաքանչյուր զգեստ ներկայացված է գիտականորեն եւ ճշգրիտ ուսումնասիրությունից հետո, ամեն ինչ հիմնավորված է եւ կատարված մեծ պատասխանատվությամբ: Տարազների վերականգնումը ամենօրյա քրտնաջան աշխատանք էր, որն ամբողջանալով դարձավ ծավալուն էթնոգրաֆիկ գործ: Հավաքածուի յուրաքանչյուր պատկեր, յուրաքանչյուր զգեստ մի առանձին աշխարհ է, ուր երևում են տարազի ժամանակն ու տեղը, եւ ամեն մանրուք ունի որոշակի նշանակություն:

Այդ աշխատանքը կատարելիս ականա օգնության հասավ թատերական ձեւավորման ասպարեզում նկարչուհու



Աշխատանքի պահին (Լուսանկար՝ Վարդան Գրիգորյանի)

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՂՆԵՅՈՒՄ

Մարտի 25-ին Սիդնեյի Համագգայինի Արշակ եւ Սոֆի Գուլստը դպրոցի սրահում տեղի ունեցավ նորածեւագետ Գեւորգ Շադոյանի հազուստների նոր հավաքածուի («Հայկական հարսանիք» եւ «Սսկե աշուն») ցուցադրությունը: Մասնակցեց 43 մոդել՝ ներկայացնելով 50-ից ավելի ինքնատիպ ձեւավորմամբ հազուստներ: Կազմակերպիչն էր Ավստրալիայի Հայ ավետարանչական ընկերակցությունը եւ Հայ ավետարանական եկեղեցին:

Գեւորգ Շադոյանի ստեղծած մոդելները աչքի են ընկնում հայկական ավանդական տարազի եւ նորածեւության ժամանակակից միտումների ներդաշնակզուգադրմամբ: Աշխատանքները մեծ հետաքրքրությամբ ընդունեցին ավստրալիահայ համայնքը եւ օտարազգիները:

Մեր թղթակցի հետ զրույցի ժամանակ Գեւորգ Շադոյանը երախտագիտությամբ նշեց իրեն հրավիրողներին եւ ցուցադրության կազմակերպիչներին՝ վերապատվելի Գրիգոր Յունուշաջեկյանին եւ տիկին Տաթևին, տեր եւ տիկին Մանուել եւ Աստղիկ Մանուկյանին, տիկին Լյուսի Արոյանին եւ բոլոր աջակիցներին: Նա շնորհակալությամբ հիշեց Սիդնեյի ՀԲԸՄ-ի ատենապետ Արամ Հակոբյանի անունը, որի հրավերով հազուստների մի մասը ցուցադրվեցին նաեւ բարեգործականի սրահում, ինչպս եւ աջակցություն ցուցաբերած Շանթ Սարգսյանին եւ Սարգիս Եղալյանին:



երկարամյա փորձը, ինչպես նաեւ մանրանկարչությունը, որի մեջ հմտացավ, երբ աշխատում էր հայ միջնադարյան արվեստի նշանավոր մասնագետ Լիդիա Դուրմուշյի ղեկավարությամբ:

Նկարչուհին մեծածավալ աշխատանք է տարել նաեւ երգիչարի համույթի համար զգեստներ ստեղծելով (ղեկ.՝ Է. Ծատուրյան): Երկար տարիներ որպես նկարիչ աշխատել է նաեւ «Պիոներ» եւ «Ծիծեռնակ» ամսագրերի խմբագրությունում, ապա՝ Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Վերջին տարիներին նկարչուհին ձեռնամուխ էր եղավ մեկ այլ պատկերաշարի ստեղծմանը՝ եկեղեցական, մասնավորապես կաթողիկոսական զգեստների ձեւավորմանը: Այստեղ նրան օգնության եկան մանրանկարչի գիտելիքները: Նա վերականգնեց անցյալի կաթողիկոսական զգեստները: Ֆ. Գրիգորյանի աշխատանքները պահպանվում են Ս. Էջմիածնում եւ Երուսաղեմում:

Ֆլորա Գրիգորյանի վերստեղծած զգեստները հիրավի մեծ գիտական նշանակություն ունեն, կարող են ունենալ նաեւ կիրառական նշանակություն: Առաջիկայում հրատարակվելու է նրա վերականգնած տարազների եռալեզու ալբոմը, որի ձեւավորողը նկարչուհու թոռը՝ Վահե Գասպարյանն է:

Ցավոք հեղինակին չէր վիճակված գիրքը տպագրված տեսնել, նրա կյանքն ընդհատվեց այս տարվա մարտի 25-ին, 79 տարեկանում: Սակայն արվեստագետի կյանքը շարունակվում է նրա ստեղծագործություններում...

Վիկտորյա Տեր-Սարգսյան
արվեստագիտության թեկնածու



Երեւանի տարազ



Վանի տարազ



Ծարտարապետը պետք է լավ նկարիչ լինի...

ասում է Ծարտարապետ-նկարիչ Արծրուն Սեդրակյանը

Արծրուն Սեդրակյանը մի արվեստագետ է, որ նրբին զգացողությամբ վերարտադրում է հայրենի բնաշխարհի կախարհիչ գույները:

Ծնվել է 1955 թ. Երեւանում: 1979 թ-ին ավարտել է Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը, ապա ուսումը շարունակել Սանկտ Պետերբուրգում: Վերադառնալով հայրենիք՝ աշխատանքի է անցել Երեւանի ճարտարապետական ինստիտուտում, 1981-ից դասավանդել է «Ծարտարապետության հիմունքներ» առարական, իսկ նկարչության ամբիոնում՝ գծանկարչություն:

2004-ից Երեւանի ճարտարապետների միության անդամ է, 2005-ից՝ Հայաստանի նկարիչների միության անդամ:

Ծարտարապետ-նկարչին հանդիպեցինք արվեստանոցում եւ խնդրեցինք պատասխանել մի քանի հարցի:

- Արդյոք Ձեր երկու մասնագիտությունները չե՞ն խանգարում միմյանց:

- Յուրաքանչյուր լավ ճարտարապետ պետք է լավ նկարիչ իմանա, այլապես նրա աշխատանքում ներդաշնակություն, հարմոնիա չի լինի: Ավելին՝ բոլոր ճարտարապետները, այդ թվում մեր մեծ վարպետներ Ալեքսանդր Թամանյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Ջիմ Թորոպյանը, բավականին հաջող տիրապետել են նկարչությանը: Նկարչությունն ու ճարտարապետությունը փոխկապակցված են:

- Նկարի թեմայի ընտրությունը կախված է ձեզանից, թե աշխատում եք նաեւ ըստ պատվերների:

- Շատ են սիրում ստեղծագործել իմ մտահղացմամբ՝ տեսնելով այն, ինչը հասարակ աչքին հասու չէ: Նկարի մեջ



ոգի եւ սեր են լցնում մտովի տեսնում կտավի վրա, ապա՝ նկարում, սակայն լինում են նաեւ պատվերներ, որոնց վրա եւս սիրով են աշխատում:

- Ո՞ր նկարի վրա եք առավել երկար աշխատել, ինչո՞ւ է այն յուրահատուկ:

- Բանն այն է, որ արվեստագետի համար իր ստեղծած բոլոր գործերն էլ երեխայի պես հարազատ են: Ամենքն էլ ունեն իրենց պատմությունն ու հիշողությունը: Ավարտում գործերիս թիվը անցնում երկու հարյուրից:

- Ո՞ր ժանրում եք նկարում:

- Ես բազմաժանր նկարիչ եմ, ունեմ դիմանկարներ, բնանկարներ, կոմպոզիցիոն աշխատանքներ, մատյուրմորտներ:

- Եթե երբեւէ իրադարձությունները ստիպեն թողնել նկարչությունը, ուրիշ ինչ ոլորտում կցանկանայիք ստեղծագործել:

- Նկարելն ինձ համար օդի ու ջրի պես անհրաժեշտություն է, առանց որի չեմ պատկերացնում կյանքս: Ինձ համար գերագույն հաճույք է կտավի առաջ մտելն ու ստեղծագործելը: Այսօր մարդիկ փոքր-ինչ հեռացել են հոգեւորից, նյութականը շատ է կլանում մեզ: Մոռանում ենք իրական արժեքների մասին: Ես կուզեի, որ ամեն ոք զբաղվեր իր մասնագիտությամբ, սիրեր իր գործը: Ուստի, ինչ էլ լինե, կրկին այս արվեստով կզբաղվեի:

- Դուք դասավանդում եք ճարտարապետական ֆակուլտետում: Ձեր ուսա-

նողներն առավել հակված են ճարտարապետությանը, թե՞ արվեստանոցում գտնվող նկարների ազդեցությամբ նրանց մեջ էլ է նկարելու սեր արթնանում:

- Ուսանողները հաճախ են այցելում արվեստանոց: Նրանց համար գերագույն հաճույք է ե՛ւ այստեղ գտնվելը, ե՛ւ նկարելը: Նրանց համար պրակտիկայի հարմար տեղ է: Ես երբեւէ չեմ թելադրել իմ կամքը նրանց մասնագիտության հարցում. ամեն ոք ինքն է իր ապագան որոշողը, սակայն նկատել եմ, որ նրանց մեջ կան շնորհալիներ:

Սիրում եմ շփվել ուսանողների հետ, նրանց փոխանցել իմ մեջ եղած սերը դեպի նկարչությունն ու ճարտարապետությունը:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն երիտասարդներին, ովքեր արվեստում կատարում են իրենց առաջին քայլերը:

- Նրանց խորհուրդ եմ տալիս խորամուխ լինել նկարչության գաղտնիքների մեջ: Շատ կարեւոր է նաեւ տեսողական հիշողություն ունենալը, իսկ տեսողական հիշողությունը զարգանում է շատ նկարելուց, հատկապես ծեպանկարներ կատարելուց:

- Ո՞րն է Ձեր նշանաբանը:

- Աշխատել, կառուցել, ապրել սիրած մասնագիտությամբ՝ պահելով հոգեւոր հարստությունը:

Զորայցը վարեց Լ. Մինասյանը



Մ ուշեղ Գալշոյանը Ղաշտենցի «Ռանչպարնե-րի կանչը» վեպը ավարտում է մի ծանոթությամբ՝ «Բրաբիոն ծաղիկ որոնողը»։ Ովքե՞ր են «Բրաբիոնի ծաղիկ որոնողները», - նրանք, ովքեր առասպելը, հեքիաթը եւ իրականը խառնել-շաղախել են իրար՝ Վիլյամ Սարոյան, Խաչիկ Ղաշտենց, Մուշեղ Գալշոյան, եւ հանկարծ սրանց կողքին մի մեղմ, ազնվաբարո նկարիչ - Էդվարդ Վարդանյան։

Երեւի մեր նշածներից ամենաքիչ առարկայական-իրականը եւ ամենագուսպ ու ամենապարզ մի քանի մոտիվներով հեքիաթային-առասպելական ամենացայտուն արտահայտությունը գտնում ենք Էդվարդ Վարդանյանի ստեղծագործության մեջ։



Կերդարվեստ

Էդվարդ Վարդանյանի գեղարվեստական աշխարհը

Ազգային պատկերասրահում նա բացել է իր անմեղ հեքիաթների երկիրը՝ հավաքված Արարատ կամ Ազատ Մասիս լեռան փեշերին, որն ինքը ամենաշոշափելի առասպելն է, մեր ժողովրդի ծննդյան, հեքիաթային վայելքների ու անլուր ողբերգությունների վկան։ Այստեղ, այդ մեծ վկայի ամենատեսալի տակ ամառող թախծը, վայելքը եւ կարոտախտն են ծավալվում։ Հայը միշտ կարոտ ունի - «Երկիրը», անցյալի փառքը, անցյալի առասպելը, անցյալով մաքրվելը եւ անշեջ հույսը, որովհետեւ առասպելն ու հեքիաթը չեն կարող անհույս լինել, այլապես կստացվի մղձավանջ, հոռետեսություն, կեղծ իրատեսություն, ատելություն, որոնք զովերգող արվեստագետներն եւս կան, այդ թվում՝ տաղանդավոր։

Ուրեմն մենք հավաստեցինք, որ Էդվարդ Վարդանյանը իր հայրենակիցների հեքիաթասացների կամ ռապսոդների (վիպասացների) այն սերնդից է, որը ոչ թե պղնծե շեփոր, այլ եղեգնյա փող է հնչեցնում։ Բայց իր առասպելական-հեքիաթային տարբերակները, որոնք նաեւ մերն են, նա հնչեցնում է գեղանկարչության լեզվով։ Իսկ դա ունի՞ ձեւ, գույն, մի մատչելի կամ ծանոթ մշակված նկարչական լեզու, թե՞ անհողաբաշխ մի աղմուկ է։ Այսինքն դա գիտակցված է, թե բնագոյային։ Ենթադրենք, թե մի ընդհանուր հանրահայտ բառով ասենք «իդիլիա», հովվերգություն, բայց ո՞ր լեզվով - դասական (Պոստեն, Լոռեն), նեոռոմանտիկ կամ սիմվոլիկ (Ռոդեն, Գուստավ Մորո), թե՞ մի լեզու, ժամանակից դուրս, որ իր ճարտարությամբ եւ կեղծ-բանաստեղծական ֆանտազիայով թաքնված է մի ուրիշ, ավելի ազնիվ աշխար-

հի քողի տակ (պրեռաֆաելիտներ)։

Մեր համեստ կարծիքով, դա մի լեզու է, որ վերջին ավելի քան հարյուր տարում վերստին հայտնաբերեցին հայ նկարիչները, հանճարեղ գյուտեր անելով, երբեմն էլ մոտենալով իսկական ազգային ինքնության (թեւեւ հաճախ էլ դրանից հեռանալով)։ Դա գույնի եւ լույսի ներկայանակն էր, որը հայտնագործեցին անշուշտ իմպրեսիոնիզմի եւ պոստիմպրեսիոնիզմի օգնությամբ համեստագույն վարպետներ, առանց որեւէ մեծ աղմուկի, - Թադեւոսյան, Առաքելյան, Գալֆեճյան, Կոջոյան եւ անշուշտ Սարյանի առնական հանճարը, իսկ դրսում այդ մոռացված, բայց վերստին հարություն առած գունային եւ լուսային երանգները իր անձնական-ազգային, ողբերգական հեքիաթներով, հույզերով ու շեշտերով հնչեցրեց Արշիլ Գորկին։

Իսկ եթե գանք դեպի մեր օրերը, ապա պիտի հիշենք Էդվարդի ամենաանմիջական ուսուցչին՝ Արա Բեքարյանին, որ մի առանձին անմիջականությամբ նրա առջեւ բացեց հայոց մրկված ու հրաբորբ կավահողի գունային գաղտնիքը, Զարդարյանին, որ սարյանական սուր կոնտրաստներին վաղորդյան լեռնային սառնություն բերեց եւ իհարկե Մինասի վաղ շրջանը իր գյուղապատկերներով, որտեղ գունային հարթությունը ծայր աստիճանի պարզեցվեց։

Այս ենթահողի վրա է, որ այսօր ցուցադրված նկարներում հասունացել է Էդվարդի բանաստեղծական-քնարական մեղմ տաղանդը։ Բայց նրա հոգու խորքում թաքնված են հեքիաթը եւ առասպելը - բրաբիոն ծաղիկի որոնումը, որ

Մ. Գալշոյանը հիանալի ցույց է տալիս Դաշտենցի երկու վեպերի առթիվ, ինքը իր հերթին լինելով «Երկրի» կարոտախտի ամենացայտուն երգիչը:

Վերը նշված նկարիչները վերաբացել են հայ միջնադարյան արվեստի, հատկապես Անիի դպրոցի կարեւոր մի էս-

սահմաններից, տարածվելով դեպի արեւմուտք, դեպի մեծ աշխարհ բացվող սահմանները): Նման մի զգացում հայ նկարիչներից մի կարճ ժամանակ ապրել է Սեյրան Խաթա-

մաջյանը իր վաղ երիտասարդության շրջանում, որը շարունակություն էր բերել չի գտել, քանի որ նկարիչը դիմեց մտած-

ված էսթետիզմի Կանդի-

նսկու հետեւողականու-

թյամբ:

Էդվարդ Վարդանյանը որոշակի սիմվոլների եւ որոշակի գունային եւ գունատոնային շրջանակում դիմում է յուրահատուկ գեղարվեստական խաղի, որ մասամբ հիշեցնում է սյուրռեալիզմի ավտոմատիզմը եւ Արշիլ Գորկու դիմելը իր «հայկական» հիշողությանը: Իսկ «հայկական» առողջ հիշողության մեջ այնքան օրգանապես է սերտաճել հեթանոսական եւ ազգային ու համաշխարհային քրիստոնեական հիշողությունը, որ դրանց սահմանները դժվար է սահմանել - օդապարիկ, ջրանույշ, կին, թե հրեշտակ, Արտամետի խնձորը եւ աքաղաղն ու սիրամարգը որքանով են հեքիա-



թետիկական հատկանիշը, որ թերեւս այնքան ցայտուն է մյուս դպրոցներում (չհաշված որմնակարը), եւ ոչ թե հեռանկարի, այլ գույնի ու գունեղանքների միջոցով հարթության եւ տարածականության հավասարակշռման, այսինքն բացարձակ գունային արժեքի ու վալյորի (գունա-տոնային արժեքի) հավասարակշռման:



Անշուշտ Էդվարդ Վարդանյանը իր գեղանկարչական հնարներով (գունահարթություններ եւ նրանց միջեւ գործող ֆիզիկական-առարկայական սիմվոլներ) չի սահմանափակվել միայն վերը նշված ակունքներով: Մենք գիտենք 20-րդ դարի երկու մեծ գեղանկարիչների՝ Շաքալին եւ Միրոյին, մեկը վիտեբսկցի հրեա, մյուսը՝ կատալոնացի, որոնց նկարչության մեխը նույնպես բանաստեղծական է: Առաջինի մանկության եւ սիրային ֆանտազիաները ներանձնական են, որոնք իրենց հուզականությամբ եւ լեզվով ձգտում են դուրս գալ անձնականի սահմաններից ու դառնալ ընդհանուր, համամարդկային, մյուսինը՝ արխետիպային (նախապատմական արվեստ, մանկական նկարչություն եւ ֆրեյդիստական սիմվոլիկա), որոնք, ընդհակառակը, ձգտում են վերածվելու եզակի եւ ներանձնական արտահայտության: Այս երկու մեծ վարպետներից ունեցած ներշնչանքը, թվում է, Վարդանյանին շատ են օգնել հայտնաբերելու իրեն հատուկ առասպելական սիմվոլիկան եւ նախատիպերը, որոնք ոչ ներանձնական են, ոչ էլ ֆրեյդիստական, այլ կարելի է ասել, ցեղային, ավելի լայն առումով՝ ազգային, էլ ավելի լայն իմաստով՝ նախա-պատմա-ռեզիդուալ (այսինքն ձգտում է ձերբազատվել նեղ հայկական համարված

թային, որքանով քրիստոնեական, որքանով «երկրից» (Տարոն-Վասպուրական), որքանով են հայկական-մերձարեւելյան, ի՞նչ լույս է փռված Արարատի փեշերին - հոգեւո՞ր, թե՞ հոգեւորը հենց Երեւանի գիշերային լույսերն են, որ կեսգիշերվա կապույտում տարածական պատրանք են ստեղծում, դա լքված գյուղի դաստակե՞րտն է, թե՞ Թալինի տնամերձերից մեկը, ոչխարնե՞րն են լուսեղեն հրեշտակին կամ պայիկին տանում փարախ, թե՞ նա՞ ոչխարներին:

Ի վերջո ամեն մի նկար ունի իրեն հատուկ կոլորիտը՝ ըստ նկարի արտահայտած տրամադրության - սեւի եւ կապույտի զանազան կետային ցուլքերով, տարբեր հողագույների, դեղինների, կարմիրների, դարչնագույնների եւ այլն: Նկարներում որքան էլ փնտրես, չես գտնի որեւէ վուլգար, գռեհիկ կամ մղձավանջային բան, որոնցից առհասարակ դժվար է խուսափել. հաճախ նկարի անկյունում, ինչ-որ քարի վրա, կամ նույնիսկ սխեմատիկ սարյանական տիպի նկարված ավանակի վրա մտած ինքնանկար հիշեցնող մի նուրբ հումորով դեմք կամ ֆիգուր կա - Էդվարդ Վարդանյանը իբրեւ դիտող, իբրեւ խորուս, իբրեւ մեկնաբան-վկա: Այս արվեստը վերջ չէ, ոչ էլ սկիզբ: Այն կարող է տարբեր՝ հայ եւ ոչ հայ, միայն հայ հարազատ հոգիների մեջ բորբոքվել ու մեղմանալ, բայց վերանալ՝ երբեք, ինչպես չեն վերանում կարոտը, մրմուռը եւ սերը:

Այս է «բրաբին» ծաղկի ճանապարհը, մեր ինքնության ճանապարհը:

Էդվարդ Վարդանյան



Edvard
Vardanyan



Phoenicia Restaurant



Passionate for Food

3 Temanyan Str.,
Entrance off Isahakyan Str.
Yerevan, Armenia

For reservations:
Tel: + 374 1 56 18 94
URL: www.phoenicia.am
E-mail: info@phoenicia.am

Open for lunch & dinner